

ՀՀ ԳԱԱ ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԲԱԼԱՅԱՆ ԶԻՆԱԻԴԱ ՎԱՆԻԻ

ԱՐՑԱԽԸ XIX ԴԱՐԻ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ժ. 01. 01-«Հայ դասական գրականություն» մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների դոկտորի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2021

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան
գրականության ինստիտուտում

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բանասիրական գիտությունների դոկտոր
Ալբերտ Վարազդատի Մուշեղյան

բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Վազգեն Հմայակի Սաֆարյան

բանասիրական գիտությունների դոկտոր, դոցենտ
Գագիկ Վահեի Խաչիկյան

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի Խ.Աբովյանի անվան հայկական
պետական մանկավարժական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2021 թ. դեկտեմբերի 24-ին, ժամը
12:30-ին, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում
գործող ԲՈԿ-ի՝ Գրականագիտության 003 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 375015, Գրիգոր Լուսավորչի 15:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան
գրականության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրը առաքված է 2021 թ. նոյեմբերի 12-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝

բան. գիտ. թեկնածու, դոցենտ
Ս. Մարգարյան

Ս. Մարգարյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

«Արցախը XIX դարի հայ գրականության մեջ» առենախոսությունը **առաջին գրականագիտական փորձն է՝** XIX դարի հայ գրականության ընդհանուր համապատկերում վեր հանելու, մեկնաբանելու և արժևորելու **Արցախի թեման՝** XVII-XIX դդ. գրապատմական իրադարձությունների ընդհանուր շրջագծում:

Թեմայի շրջանակները բավական լայն են, ուստի մենք, նախընտրել ենք առանցքային այն հուշարձանները, որոնք գեղարվեստորեն ու տիպաբանորեն առավել խորությամբ են ներկայացնում Արցախի գրականությունն ու պատմությունը, բնաաշխարհագրական պատկերը:

Անցյալի գրական ավանդները նորոգության ոգով շարունակվեցին՝ ասպարեզ բացելով ազգային գաղափարակառուցը մատնանշող գրական նոր անունների՝ Մ. Թաղիադյանի, Սարգիս արքեպիսկոպոս Ջալալյանցի, Ղ. Ալիշանի, Ա. Կոստանդյանի, Րաֆֆու, Մուրացանի, Ա. Բեկնազարյանի, Լեոյի, Հայկունու, Մակար արքեպիսկոպոս Բարխուդարյանի երևան գալու համար:

Առենախոսության **հետազոտության առարկան** XIX դարում Արցախի մասին ստեղծված գրականությունն է:

Գիտական ուսումնասիրության մեջ XIX դարի հայ գրականության ընդհանուր ֆոնի վրա ներկայացվում է **Արցախի թեման՝ որպես առանձին դիտարկվող** գրապատմական **երևույթ**:

Այն իր ավանդույթակիր շերտերն ու գրական, պատմական, քաղաքական, փիլիսոփայական մտքի, հոգևոր և աշխարհիկ մշակույթի ու արվեստի ինքնատիպ վավերագրերն ունի:

Պատմական Հայաստանի 10-րդ նահանգ Արևելից կողմանքը՝ Արցախը (ներառյալ՝ Ուտիքը) մի անգամ չէ, որ զարմացրել, հիացրել է աշխարհի ժողովուրդներին:

Հասարակական կյանքի տարբեր ասպարեզներում գրական, պատմական երկերի, մշակութային կոթողների, քաջագործությունների հեղինակ են եղել նրա զավակները, աշխարհին ի ցույց են դրել իրենց ֆենոմենալ կերպարը, արարելու և ազատասիրելու հզոր ուժը, հարատևելու անկոտրում կամքը՝ ժամանակի հետ, ժամանակին ընդառաջ:

Անդրկովկասի մշակութային կյանքի ու լուսավորության կենտրոններից մեկը XIX դարում Շուշին էր: Այն իր դպրոցներով, տպարաններով, իր նկարագրով՝ բարքերով, նիստ ու կացով, բանաստեղծներով, գուսաններով, մշակույթի գործիչներով Արցախի մտավոր կյանքի տաք, անհանգիստ զարկերակն էր: Թատրոնի, թարգմանական արվեստի հարուստ ավանդներ ունեցող հայ ժողովրդի արցախական հատվածում դա մի նոր օջախ էր:

Ընթերցասեր արցախցին ոչ միայն ռուս գրականության մեծերի, այլև եվրոպական դասականների երկերից շատերը, որոնք թարգմանվում էին Շուշուում, յուրացրեց ու ընդլայնեց իր մտավոր տեսադաշտը:

Գրականության, պատմության, մշակույթի ասպարեզում ստեղծվել են նաև արժեքներ, որոնք, սակայն, ինչ-ինչ պատճառներով մերժվելով՝ խորհելու, քննելու, վերագնահատելու տեղիք են տալիս:

Այդ քայլն անշուշտ պետք է կատարվի՝ նոր հայացք ձգելով գրականագիտական սկզբունքներին, մոտեցումներին, գոյություն ունեցող կարծրատիպերին, որոնք խոչընդոտել ու խոչընդոտում են մշակույթի արժեքների ճիշտ և անաչառ, գիտական գնահատմանը:

Գրականության փիլիսոփայությունը, ազգային գաղափարախոսությունը, ֆենոմենոլոգիան այդ են պահանջում:

Երբեք էլ ուշ չէ գրական ու պատմական, մշակութային հարստությունը վերագնահատել, չարժևորածն արժևորել, մերժվածն ընդունել՝ հիմնվելով գիտական չափանիշների վրա:

Այս մտահոգությամբ էլ փորձել ենք վերարժևորել XIX դարի այն գրականությունը, որում պատկերված է Արցախը:

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Քանի որ Արցախը ներկայացնող XIX դարի գրական ստեղծագործությունները ամբողջական ուսումնասիրության չեն ենթարկվել, ուստի այս աշխատանքում քննվող նյութն ամբողջությամբ ձեռք է բերում **արդիական հնչեղություն՝** միաժամանակ դառնալով **գրականագիտական նոր խոսք:**

Պատմության դասերը հաճախ կանոնակարգվում են ազգային գաղափարաբանության համակարգում՝ իրենց հերթին առաջադրելով ժամանակաշրջանի հրամայականը՝ գեղարվեստի, պատմության ու գրականության փիլիսոփայության քննությունը:

Գեղարվեստական ու պատմական երկերը իրենց մեջ ամփոփում են դարաշրջանի պատմաքաղաքական անցքերի ընդհանրացված պատկերը:

Ուսումնասիրության վեց գլուխներում ներկայացված են արցախահայության պատմության, գեղարվեստի և գրականագիտական, մեթոդաբանական, փիլիսոփայական ընդհանրացումներով փաստագրված դրամատիկ անցքերը՝ քաղաքական ճակատագիրը, հարցապնդումները, Խամսայի մելիքությունների՝ այդ ամենում ունեցած դերը, ժողովրդի հոգևոր և աշխարհիկ արարումները, ազատասիրական մղումները՝ ազգային-ազատագրական շարժումը, պայքարը, քաղաքական կողմնորոշումները, մասնավոր և ընդհանուր շահերը, մելիքների միջև տեղի ունեցող

տարաբնույթ վեճերը, կոիվները, գաղթերը, նրանց օտարամոլությունը, ընդհանրության մեջ՝ կերպավորումների տիպական առանձնահատկությունները, այդ ամենից օգտվող օտարների անհարկի միջամտությունները, հարևան աշխարհակալ երկրների քաղաքական խաղերը, որոնց հետևանքով խաղաքարտի վրա են դրվում երկրի անվտանգությունն ու անկախությունը՝ հանգեցնելով հոգևոր և աշխարհիկ իշխանությունների կորստին:

Աշխատության պատմական ժամանակաշրջանն ընդգրկում է XVIII-XIX դդ. Խամսայի մելիքություններում քաղաքական կյանքի, արցախահայության վիպական նկարագրի, բարոյագեղագիտական, հոգեբանական, ազգային գաղափարաբանության, գրականության, փիլիսոփայության ճշմարիտ դիմագիծը, տարածաշրջանում՝ աշխարհագրական, տեղագրական, պատմական լանդշաֆտում, քաղաքական իրավիճակին տիրապետել ցանկացող հարևան երկրների երկդիմի խաղերի, արտաքին և ներքին հարաբերությունների, ինքնիշխանության կորստի սուր պատկերը: Քննված է նաև արցախահայության ազատագրական պայքարը, քաղաքական դիրքորոշումները, հուսախաբություններն ու կորուստները, լուսավորչական-կրթական շարժումը, Անդրկովկասում Շուշիի՝ «արվեստների օազիսի» (Մ. Շահինյան) լուսավորության կենտրոն հանդիսանալը՝ ներկայացնելով Արցախում ծավալված մշակութային, գրական ու պատմական կյանքի հարուստ նկարագիրը: Այդքանով մի անգամ ևս ընդգծվում է ուսումնասիրության մեջ բարձրացված հարցերի **կարևորությունն ու թեմայի գործնական նշանակությունը:**

ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության քննության **առարկան** XIX դարի հայ գրականությունն է՝ առանձնադիտված **Արցախի թեմայով**, իսկ **նպատակն ու խնդիրն է՝** հայ գրականության ընդհանուր շրջանակում քննել Արցախում ծավալված մշակութային, լուսավորական, ազգային- ազատագրական մաքառումների պատկերը, մեկնաբանել ժամանակաշրջանի քննադատության ու պարբերական մամուլի զարգացման միտումները, ապա ցույց տալ ստեղծված երկերի ու նրանց հեղինակների հանդեպ ցուցաբերված ոչ ճիշտ վերաբերմունքը, հոգևոր արժեքների թերի գնահատումը կամ մերժումը, որն ուղեկցվում էր հաճախ սուր բանակոիվներով-պոլեմիկայով բանավեճի ժանրից պահանջվող կանոնների խախտմամբ:

Այսպիսով, ուսումնասիրության **հիմնական նպատակ** է Արցախի գրականության բնութագրումն ու արժևորումը՝ XIX դարի հայ գրականության

թեմատիկ, մեթոդաբանական, գրականագիտական, գաղափարական ու ոճական ընդհանուր տարածքի մեջ:

Գրականության զարգացման ընդհանուր ֆոնի վրա քննել ենք ռուս գրող Պլատոն Զուբովի «Ղարաբաղի աստղագետը» պատմավեպը, Րաֆֆու «Խամսայի մելիքությունները» երկը, Ա. Բեկնազարյանի **135 տարի մերժումի կնիքը կրող «Գաղտնիք Ղարաբաղի»-ն**, և զուգահեռ՝ թեմայի հարցերին և խնդիրներին առնչվող Րաֆֆու «Գաղտնիք Ղարաբաղի» մատենախոսությունը, Լեոյի «Վէ՛պ թէ պատմութիւն»-ը, Մ. Բարխուդարյանի «Քննադատութիւնն քննադատութեանց» գիրքը, Մուրացանի «Բաղտասար Մետրապոլիտ Հասան Զալալեանցի համառօտ կենսագրութիւն»-ը, «Ռուզան կամ հայրենասեր օրհորդ»-ը, «Խորհրդավոր միանձնուի»-ն, Մ. Թաղիադյանի «Ճանապարհորդութիւն ի Հայս»-ը, Սարգիս Արքեպիսկոպոս Զալալյանցի «Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան»-ը, Հայկունու «Ուղեգնացական ակնարկներ»-ը, Ղ. Ալիշանի «Արցախ», Մ. Բարխուդարյանի համանուն «Արցախ» մեծարժեք գրքերը, Լեոյի «Մելիքի աղջիկը», Կ. Մելիք-Շահնազարյանի «Ձուռնա-Տմբլա» երկը, որոնք գնահատման և վերաբժնորման կարիք ունեն:

Քննությանը զուգահեռ ներկայացրել ենք նաև արցախահայության քաղաքական ճակատագրին վերաբերող հարցերը, նրա պայքարը արտաքին և ներքին թշնամիների դեմ, հարաբերությունները հարևան երկրների հետ, ձեռքբերումներն ու կորուստները:

Գրականագիտական, մեթոդաբանական, արցախագիտական առկա փորձին զուգահեռ ներկայացվող ուսումնասիրությունն իր տեսակում ամբողջության մեջ **գիտական առաջին քայլն է:**

Ուսումնասիրությանն առնչվող քննական գրականությունը քիչ է:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Առաջնորդվելով համապատասխան գրականագիտական մեթոդաբանությամբ, գիտական ուսումնասիրությունը կատարել ենք օգտագործելով ***համադրական, վերլուծական, աղբյուրագիտական ու վերաբժնորման, կենսագրական, պատմական, նշանագիտական, կառուցվածքաբանական մեթոդները***, ընդգծելով ուսումնասիրվող նյութի ***տեսաքննական, կառուցվածքային, տիպաբանական առանձնահատկությունները, ոճական հարցերը:***

Ներկայացված երկերի վերլուծության ընթացքում առաջնային ենք դիտել տիպաբանական սկզբունքները՝ կոնկրետ վերլուծության, ձևի ու բովանդակության, պատմության, գրականության, գեղարվեստի փիլիսոփայության մասնագիտական արժևորման ձևերում:

Ուսումնասիրության ընթացքը պայմանավորված է նաև գեղարվեստական առանձնահատկությունների, վիպականության և պատմականության փոխհարաբերությունների, տիպաբանական առանձնահատկությունների, առանձնացող ոճերի, գրական ուղղությունների, ժանրային տարբերակումների, առանձնադիտումների, հայ և համաշխարհային տեսական փորձի զուգորդմամբ և քննությամբ:

Մեկնաբանված են գրքերի դիպաշարը, գաղափարական բովանդակությունը, վիպական և պատմական կերպարների համակարգը, բնաշխարհը, պատմամշակութային անդրադարձները, հեղինակների՝ այդ և այլ հարցերի կապակցությամբ առաջնային դիտված նպատակները, խնդիրները, համոզմունքները:

Ո Ւ Ս ՈՒ Մ Ն Ա Ս Ի Ր ՈՒ Թ Յ Ա Ն Փ ՈՐՁ Ա Շ Ր Ձ Ա Ն Ը

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գիտխորհրդի 2011 թ. սեպտեմբերին կայացած նիստում:

ԼՂՀ, ՀՀ, ՌԴ և սփյուռքի, արտասահմանյան գիտական համապատասխան պարբերականներում, դոկտորական աշխատանքների համար ՀՀ ԲՈՒՀ-ի հաստատած հանդեսներում, գիտական տեղեկագրերում, հանրապետական և միջազգային գիտաժողովներում, կոնգրեսներում, կոնֆերանսներում հրատարակվել են ուսումնասիրության հիմնական դրույթներն արտահայտող չորս տասնյակից ավելի (45 հրապարակում) գիտական հոդվածներ, երեք (3) ուսումնասիրություն:

2004 թ. «Հայաստան» հրատարակչությունը լույս է ընծայել գիտական ատենախոսության առաջին գլխի առաջին մասը հանդիսացող Պլ. Ջուբովի «Ղարաբաղի աստղագետը» պատմավեպի տեսաքննական վերլուծությունը՝ **«Արցախը XIX դարի գրականության մեջ և մշակույթում»** վերտառությամբ:

2014 թ. **ԼՂՀ պերպարվերով** «Դիզակ Պյուն» հրատարակչությունը լույս է ընծայել **«Մուրացանի գեղարվեստի պարադիգմաների փիլիսոփայական մեկնությունները»** (պատմաբանասիրական քննական տեսություն) մենագրությունը:

2021 թ. Ստեփանակերտի «Դիզակ պյուն» հրատարակչությունը լույս է ընծայել **«Արցախը XIX դարի հայ գրականության մեջ»** (գրականագիտական ուսումնասիրություն) մենագրությունը:

Դոկտորական աշխատանքի համար պատադիր կերպով նախանշված սկոպուսի շտեմարանների ցանկի պարբերականներից մեկում («Իմաստություն» - “WISDOM”) տպագրվել է մեր (BALAYAN, Z. (2021). Literary, Methodological Paradigms: The Theme of Artsakh in the Works by Raffi and Muratsan. WISDOM, 18(2), 6-17) հոդվածը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, վեց գլուխներից, որոնցից առաջինը և երկրորդը՝ երկու մասերից, երրորդը, չորրորդը, հինգերորդը՝ երեք մասերից, վեցերորդը մեկ մասից, վերջաբանից, եզրահանգումից, օգտագործած գրականության ցանկից:

Ն Ե Ր Ա Ծ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ներածության մեջ ներկայացված է աշխատանքի **գիտական հարցադրումը**:

Նրանում *սահմանված* և *որոշարկված* է հարցի **դրվածքը**, տրված է Արցախի դարության, պատմության սեղմագիծը, որը հատկանշող կողմեր ունի՝ *Արցախը* որպես *XVIII դարի հայ ազատագրական շարժման ու պայքարի հանգույց*:

Ուսումնասիրության **հիմնական նպատակն** է Արցախի գրականության *բնութագրումն* ու *արժևորումը* XIX դարի հայ գրականության *թեմատիկ, գաղափարական* ու *ոճական* ընդհանուր տարածքի մեջ:

Բացահայտված են տիպաբանական այն առանձնահատկությունները, որոնք մատնանշում են **Արցախի թեման** ամբողջացնող երակը, որում մեկնաբանվում են հայկական այս երկրամասի գրականության, պատմության զարգացման պարույրները, օրինաչափությունները, ինքնատիպ ու արգասաբեր դրսևորումները:

Ներածության մեջ կարևորված է գիտական մի քանի սկզբունքներ ևս՝ հստակ հասկացական համակարգի (մետալեզու-«աշխատանքային գործիքներ»-գիտական ապարատ) ստեղծում, շարադրանքի, փոխառված հասկացությունների հստակեցում՝ բացահայտելով իմաստային հատկանիշը:

Ներածության մեջ թռուցիկ դիտարկված է Արցախի գրականության ու պատմության ուրվագիծը XVIII դարից մինչև XIX դարավերջ, ներկայացված է XVIII դարի հայ ազատագրական շարժման և Արցախի գրական դիմանկարը: Այդ հենքի վրա մասնավորապես դիտարկված են Իսրայել Օրու գործունեությունը, Եսայի Հասան Ջալալյան կաթողիկոսի առաքելությունը, մեկնաբանված են ռուս և հնդկահայ ազատագրական մտքի (Հ. Էմին, Մ. Բաղրամյան, Հ. և Շ. Շահամիրյաններ) արձագանքները՝ Արցախի ազգային-ազատագրական պայքարի պատմությունը, բացահայտված է Շուշիի՝ որպես Արցախի ու ողջ Անդրկովկասի մշակութային, լուսավորչական, կրթական, գրական, քաղաքական կյանքի կենտրոնի համայնապատկերը:

**ՐԱՖՖԻ. ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԵՎ ՎԻՊԱՊԱՄՍԱԿԱՆ ԱՆԴՐԱԴԱՐՁՆԵՐ
ՄԱՍ I**

**ԱՌԱՋԻՆ ՎԵՊՐ (ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ) ԱՐՑԱԽԻ ՄԱՍԻՆ
(ՊԼԱՏՈՆ ՋՈՒԲՈՎ, «ՂԱՐԱԲԱՂԻ ԱՍՏՂԱԳԷՏԸ»)**

Գիտական աշխատանքի առաջին գլխի («**Րաֆֆի. թարգմանական և վիպապարմական անդրադարձներ**») երկու մասերը («**Առաջին վեպը (թարգմանական) Արցախի մասին (Պլատոն Ջուբով, «Ղարաբաղի աստղագէտը**»») և «**Անկախության և պերականության հուշը (Խամսայի մեկիքությունները**»»)՝ ա և բ կերտերով») փոխկապակցված են իրար, մեկը որպես Րաֆֆու թարգմանական, մյուսը՝ սեփական գրվածք:

Առաջին գլխի առաջին մասը («**Առաջին վեպը (թարգմանական) Արցախի մասին (Պլատոն Ջուբով, «Ղարաբաղի աստղագէտը**»») նվիրված է ռուս գրող, հետազոտող, պրոֆեսոր, 30 տարի իր կյանքը Անդրկովկասում անցկացրած Պլ. Ջուբովի «Ղարաբաղի աստղագէտը» գրքի քննությանը, որը 1882 թ. Րաֆֆին է թարգմանել ռուսերենից հայերեն և գրել առաջաբան՝ «Թարգմանչից» խորագրով:

«**Ղարաբաղի աստղագէտը**» վեպը գրականագիտության մեջ հիմնավոր գրականագիտական, պատմաբանասիրական քննության է ենթարկվում առաջադրվող աշխատանքում: Տվյալ դեպքում այն ձեռք է բերում որոշակի **գիտական նշանակություն** և շոշափելի **ներդրում**, ինչը պայմանավորված է ուսումնասիրության **նորոյթով, տեսական և կիրառական նշանակությամբ**, հատկապես այն գաղափարակարգով, որ Ջուբովի պատմավեպը գրված է «հարցասեր գրողի» (Րաֆֆի) նպատակադրմամբ՝ վեր հանել անդրկովկասյան ժողովուրդների, հատկապես հայերի ոչ հեռավոր ժամանակաշրջանի հասարակական, վիպական, պատմական, մշակութային կյանքի նկարագիրը, ներկայացնել նրանց քաղաքական կյանքի խառնիխտուն և տխուր ուրվագիծը, ինչը գրողին լիովին հաջողվել է:

Առաջինը լինելով՝ հայագիտության և ռուսագիտության մեջ վերլուծել և գնահատել ենք գիրքը, Պլ. Ջուբովին՝ իբրև ստեղծագործողի, գրողի, հետազոտողի՝ ներկայացրել գրականագիտական, պատմական, մշակութային լայն հղումներով: Այն հրատարակել ենք ընդհանուր խորագիր կրող «Արցախը XIX դարի գրականության մեջ և մշակույթում» քննական ուսումնասիրության մեջ՝ որպես **առաջին մաս**:

Ջուբովի գրական ժառանգության մեջ առանձնանում է 1834 թ. Մոսկվայում հրատարակված «Ղարաբաղի աստղագէտը» վեպը:

Մ. Միանսարյանցի աշխատության մեջ ներկայացված են ու քննության ենթարկված շուրջ 6000 գրքեր, հոդվածներ ու այլակարգ նյութեր՝ հայերեն, վրացերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն և այլ լեզուներով: Այս մատենագիտական գրքում մեկնաբանված են նաև Պլատոն Ջուբովի աշխատանքները, գեղարվեստական երկերը, որոնք գետեղված են Միանսարյանցի գրքի մատենագիտության 362, 678, 736, 745, 756 էջերում: Աշխատությունների մեջ կա հատուկ նշանակության գիրք, որի գեղարվեստական ու պատմական ֆոնի վրա քննության է առնված Ղարաբաղի մելիքության ժամանակների պատմագեղարվեստական նկարագիրը: «Ղարաբաղի աստղագետը կամ Շուշի բերդի հիմնարկությունը 1752 թվականին»: այսպես է վերնագրված Ջուբովի պատմավեպը, որը կոչվում է նաև «Անդրկովկասեան պատմական վեպ»: Բաֆֆու կողմից կատարած արժեքավոր թարգմանությունն էլ որպես աղբյուր է հանդիսացել մեր գրականագիտական քննության համար:

Երկու գլուխներում Բաֆֆին ներկայացրել է պատմական միջավայրն ու փաստերը ճշտող յուրօրինակ ընդհանրացումներ ու պարզել Ջուբովի ցույց տված ծանոթագրությունները, կատարել ճիշտ հետևություններ, ցույց տվել հեղինակի կողմից թույլ տրված պատմական անճշտությունները և այլն:

Ուսումնասիրության ***առաջին գլխի առաջին մասը՝ «Առաջին վեպը (թարգմանական) Արցախի մասին (Պլատոն Ջուբով, «Ղարաբաղի աստղագետը»»***), ներկայացնում է Արցախի մելիքների պատմությունը՝ սկսած XVIII դարի կեսերից մինչև XIX դարի առաջին տասնամյակները՝ 1826-28 թթ. ռուս-պարսկական պատերազմը, նրանց վարած քաղաքականությունը, այդ հողի վրա օտար կառույցի՝ Ղարաբաղի խանության ստեղծումը, հայ մելիքների քաղաքական ճակատագրի վայրիվերումները, կերպարների համակարգը, վեպի կենտրոնական հերոսներից աստղագետ Հասանի հրեշավոր գուշակությունը՝ կստեղծվի Ղարաբաղի խանությունը, Շուշիի տերը կլինի Ղարաբաղի նոր տիրապետողը՝ Փանահը:

Պլ. Ջուբովը «Ղարաբաղի աստղագետը» գրքում իր առջև խնդիր է դրել բացահայտել մելիքների երկպառակությունների հետևանքով առաջացած Ղարաբաղի քաղաքական ծանր իրավիճակը, առաջադրելով նաև պարսիկների անհարկի միջամտությունները մելիքների կյանքին, վերջիններիս դեպի պարսկական քաղաքական կողմնորոշում հաճախակի փոխվելը, որը, ըստ հեղինակի, ծանր հետևանքներ է ենթադրում: Այս գաղափարը Ջուբովը մարմնավորում է երևույթը ներկայացնող աստղագետ Հասանի հավաքական կերպարում՝ նրա կատարած հրեշավոր գործերը Ղարաբաղի կյանքում համարելով մելիքների կողմից թույլ տված սխալների շարունակություն, դյուրախաբություն, օտար բարքերի ընդօրինակում, անհամաձայնություններ, որոնց հետևանքը նա համարում է Հասանի

նշանավոր գուշակությունը, և այս ամենից հետևություններ անելով՝ փաստում (իր համար ճշմարիտ դիտվող) ռուսական կողմնորոշման առավելությունը:

Ատենախոսության կառուցվածքում հատուկ բաժին ենք հատկացրել Պլ. Զուբովի «Ղարաբաղի աստղագետը» վեպին ոչ միայն այն պատճառով, որ դա առաջին վեպն է Արցախի մասին, այլև այն հանգամանքով, որ նրանում ճշմարտացի են ներկայացվում Արցախի հայոց գրական դիմանկարը, գեղարվեստական տարրերը, ավանդույթներն ու էթնիկ նկարագիրը, կենցաղն ու բարքերը, մելիքների ներքին ու արտաքին առճակատումները, օտար պետությունների որդեգրած, վտանգներով հղի շահագրգռությունները՝ մելիքությունների քաղաքական ճակատագրում, ինչպես նաև ժամանակի ներքաղաքական իրադարձություններն Արցախում:

Ընդգծված ենք տեսնում հեղինակի հատուկ վերաբերմունքն ու ներքին համակրանքը արցախահայության, Արցախի մելիքների հանդեպ: Ռուսական կայսրության վարած քաղաքականությունը հայության, հատկապես Ղարաբաղի մելիքների հանդեպ:

«Ղարաբաղի աստղագետի» սյուժեի, կերպարների համակարգի քննությունը հետաքրքիր առանձնահատկությունների յուրօրինակ շերտեր է բացում, որոնց ակտիվ ընթացքը ցույց է տալիս գեղարվեստական երկի զարգացման ժամանակակից սուբյեկտիվության հնարավոր կոնցեպցիան:

Դիպաշարի և կերպարների համակարգում տրամաբանական-մտահայեցական կշռույթը դառնում է գեղարվեստական որակ: Հեղինակը ներկայացնում է վեպի կառույցը՝ պատճառահետևանքային անցումները քննելով որպես գեղարվեստական երկի դրական հատկանիշ:

Հերոսների երկխոսություններում բացահայտվում է վեպի հիմնական գաղափարը, որի արյունատար երակը Խամսայի մելիքությունների քաղաքական ճակատագրի վերհանումն է՝ իր բոլոր վերուվարումներով ու դրանցից արված զուբովյան հետևություններով:

Երևան է հանված և հստակ նշված ու հիմնավորված Զուբովի գրքի վերլուծության **արդիականությունը, հրապրապությունը, պրակտիկ արժեքը և գիտական վարկածը**. այս ամենը տեսանելի է աշխատանքի ընթացքում, քանի որ վեպը կարևոր մեկնակետ է հանդիսանում գրականագիտական քննության տեսանկյունից՝ արցախահայության գեղարվեստական նկարագրի պատկերման և արցախագիտության, կովկասագիտության և հայ տեսաքննական մտքի զարգացման գործում:

Զուբովի գրքի **գլխավոր խնդիրը** XVII-XIX դդ. Խամսայի մելիքությունների հասարակական, վիպական, բարոյական, քաղաքական ազգագրական նկարագրի վերհանումն է՝ լայն առնչությունների ներքո, **նպատակը՝** Խամսայի մելիքությունների քայքայումը ներկայացնելը՝ ցույց տրված իր նախապատճառներով և հետևանքներով, դրանցից արվող

հետևություններով, չնայած որոշ ընդգծված վերապահումների՝ քաղաքական կարգը ռուսական տիրապետության տակ գեղարվեստորեն պատկերելը:

Պլ. Զուբովի «Ղարաբաղի աստղագետը» գրականագիտական, պատմաբանասիրական, մեթոդաբանական մեկնության ենք ենթարկում քննական զուգորդումներով, բացահայտելով հետազոտության **խնդիրները, ժամանակի ու հեղինակների անհատական ոճերը, մեթոդը (պատմական),** տեսական ընդհանրացումներով դիտարկելով պատմական երկին, պատմավեպին հատուկ **ժանրային** ինքնատիպ միտումները, կերպարային, գաղափարական, սյուժետային, մեթոդաբանական, բովանդակային համակարգը, ներքին մարդու բացահայտումները, տիպաբանական առանձնահատկությունները, Զուբովի առաջադրած խնդիրներն ու նպատակը, վիպապատմական իրողությունների ներդաշնակությունն ու գեղարվեստականացման հնարանքները, դասականապաշտությունից՝ ռոմանտիզմ՝ գրական դպրոցների անցման հղանքները:

ՄԱՍ II

ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԸ (ՐԱՖՖԻ, «ԽԱՄՍԱՅԻ ՄԵԼԻՔՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»)

Ա) ՄԵԼԻՔՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ

Աշխատանքի **առաջին գլխի երկրորդ մասն («Անկախության և պետականության հուշը (Րաֆֆի, «Խամսայի մելիքությունները» երկը)՝ իր հերթին բաղկացած է երկու ենթամասից:** Առաջին ենթամասը կոչվում է **«Մելիքությունների պատմական ճակատագիրը»,** երկրորդը՝ **««Խամսայի մելիքությունները» երկի կերպարների համակարգը»:** Այն նվիրված է Րաֆֆու «Խամսայի մելիքությունները» բարձրարժեք գրքին, որի առնչությամբ մասնակի գնահատություններ են հանդիսացել Ս. Սարինյանի, Ա. Մաղալյանի և այլոց անդրադարձները: Ժամանակաշրջանի գրաքննությունը խիստ մկրատել է գրքի արժեքավոր մասերը, խոչընդոտել նրա լրիվ տպագրությանը: Այդ երևույթի մասին գրախոսությամբ հանդես է եկել Ար. Արփիարյանը: Այն ամբողջությամբ քննել ենք պատմական, վերագնահատման և նշանագիտական մեթոդներով՝ մեկնելով Րաֆֆու այդ երկի գաղափարախոսական, գրական-գեղագիտական հիմնական ուղղվածությունը, հատկանշել գրականագիտական ժանրային տարբերակումները, բնութագրել ժամանակի մարդկանց՝ մելիքների, արցախահայության, հարևան ժողովուրդների, օտար նվաճողների կերպարները՝ վիպական և պատմական շերտերով, առանձնադիտելով Խամսայի մելիքությունների կործանման քաղաքական դրդապատճառները գեղարվեստական և պատմական լույսի տակ:

«Խամսայի մելիքությունների» գլխավոր գաղափարական առանցքն է ցույց տալ, որ Ղարաբաղում մինչև XIX դարի առաջին տասնամյակները պահպանվել են հայկական իշխանությունները և ընդգծել, թե ինչպիսի գեղարվեստական նկարագիր ունեն դրանք և որոնք էին այն քաղաքական անցքերը, որոնք պատճառ դարձան դրանց կործանման: Բաֆֆին պատասխանատվությամբ է հավաքել փաստեր, պատմական այլևայլ արխիվներ քննել, վիպական բնագրեր, փոքր արձակի զարմանահրաշ նմուշներ բացահայտել, գրչագրեր հայթայթել և փորձել դրանք ի մի բերել ու ըստ այդմ՝ ամբողջացրել իր գիրքը: Իսկ հայկական իշխանությունների կործանման գլխավոր պատճառը համարել է պանդխտությունը, հայոց գաղթականությունը, որոնց մասին ժողովուրդը տխուր վիպակտորներ է հյուսել, բայց և լուսառատ պահել իր ոգու գեղեցկությունը, հավատը իր խճողված ճակատագրի հանդեպ: Եղել են նաև այլ ծանր պատճառներ:

Պատմության փակված էջ դարձան Պետրոս Մեծի և Եկատերինա II-ի քաղաքական խոստումները՝ Անդրկովկասի քրիստոնյաների վերաբերյալ: Նրանց հաջորդները չէին ցանկանում որդեգրել իրենց մեծ նախորդների քաղաքական ծրագրերը:

Բաֆֆին քննության է առել նաև Ղարաբաղի հոգևոր այրերի գործունեության շրջանակները՝ մեկնել Ղարաբաղի երեք կաթողիկոսների, հոգևոր դասի վարքը, ներկայացրել իրարամերժ երկվություններով լի կերպարների ներքին զարգացումները:

Գրքի ուսումնասիրությունը կատարված է գիտական պատշաճ մեկնաբանությամբ և արժևորմամբ: Այն գրականագիտական, արցախագիտական, հայագիտական, կովկասագիտական միտքը ներկայացնում է նոր լույսի տակ՝ դրանով ընդգծելով աշխատանքի նրբերանգները, գիտական կառուցվածքը, մեկնաբանությունները, արդիական հնչողությունը:

Ուսումնասիրության ներկայացված **հարցերը, խնդիրները** քննվել ու վեր են հանվել հաջորդաբար, տրվել են դրանց բացատրությունները, որոնք բերում են իրենց մեկնաբանությունները, հաստատում **տեսական և կիրառական** նշանակությունը:

Նյութի **մշակվածությունը** ցուցված է հիմնավոր քննությամբ, արժեքների գնահատմամբ, սակայն ընթերցող շրջանակներում որոշակի անհամաձայնություն կա Բաֆֆու ներկայացրած սկզբունքների, հարցերի առնչությամբ՝ կապված Խամսայի մելիքների իշխանական որոշ տների՝ եկվոր թե՛ բնիկ լինելու հարցի շուրջ նրա մոտեցումների հետ:

Հայ գրականության պատմության մեծ դասական Բաֆֆին, իր գրքերի գիրքը համարելով «Խամսայի մելիքությունները», այն դիտում է որպես մի երկ, որում շարադրված են «Նյութեր հայոց նոր պատմության համար»: «Այդ գիրքը,- շեշտում է գրողը Մելքոն Փանյանին գրած նամակում,- իմ բոլոր

աշխատությունների պակը պիտի համարել, ես դրանով կենդանացրի մի վաղուց կորած և մոռացված պատմություն. ես դրանով ապացուցեցի, որ հայկական իշխանությունը շարունակվում էր մինչև ներկա դարը: Դա մեծ բան է»¹:

Պատահական չեն Ռաֆֆու անդրադարձները պատմական մեթոդով և թեմաներով գրական երկեր և ուսումնասիրություններ ստեղծելու գործին:

Խոսելով «Դավիթ Բեկ» պատմավեպի ստեղծման համար օգտագործված վիպապատմական աղբյուրների մասին, Ռաֆֆին նկատում է. «Ես այս աշխատությունը, եթե ոչ բոլորովին, գոնե մասամբ լրացրի օտար աղբյուրներից օգուտ քաղելով: Բայց ինձ դեռ բավական տեղեկություններ մնում են պակաս: Այս պատճառով ես ընդհատեցի «Դավիթ Բեկի» հրատարակության շարունակությունը «Մշակի» մեջ, դիտավորություն ունենալով անձամբ ճանապարհորդել Սյունյաց աշխարհում և այդ վեպի մնացած մասները իր տեղում մշակել»²:

Մելիքությունների պատմության 200-ամյա ժամանակաշրջանի գեղարվեստական նկարագրի խնդրառությունը ավարտին ենք հասցրել, միաժամանակ օգտագործելով պատմական, նշանագիտական մեթոդները՝ «Խամսայի մելիքությունները» վերահաստատելով որպես գրականության արժեք, իսկ մեր քննությունը որպես գրականագիտական աշխատանք, որոշակի տեղեղում՝ պատմագիտականի անդրադարձով. ինչպես այլ, հատկապես նաև գիտության այս բնագավառները, որոնք փոխկապակցված են որոշակի սկզբունքներով, մետալեզոնների օգնությամբ իրար լրացնում, իրարից օգտվում են առաջադրված խնդիրները լուծելու համար, մեր օրինակում մնալով գրականագիտական դաշտում:

Ռաֆֆին «Խամսայի մելիքությունները» գրել է օգտագործելով պատմական և նշանագիտական մեթոդները:

Ըստ պատմական մեթոդի՝ գրականությունը դիտվում է որպես պատմություն: Այն կիրառելի է դառնում գրականության պատմագրության մեջ:

Նշանագիտությունը (semiotics, семиология) կառուցվածքաբանական դրույթների վրա հիմնված մեթոդ է:

Ռաֆֆու համար հարցերի հարց էր դարձել Ղարաբաղի մելիքների պատմության վերհանումը, գեղարվեստական պատկերումը. դա բխում էր պատմության, գրականության հանդեպ նրա որդեգրած փիլիսոփայությունից: Ազգային գաղափարախոսության կոնցեպցիայի այսպիսի վերանայումը առաջնակարգ հարց է. եթե ունեցել ենք քաղաքական կարգ՝ ինքնիշխանություն, ապա պետք է վերանայել

¹ Ռաֆֆի, հ. 10, էջ 582:

² Ռաֆֆի, Իմ ընթերցողներին, հ. 10, էջ 45:

արժեքները և վերագտնել ազգային գաղափարահիմքի բանալին՝ պետականության գաղափարը և նրա մարմնավորումը:

Բաֆֆին, իր ճանապարհորդության բուն նպատակին անդրադառնալով, ընդգծելով իր մտասևեռումը՝ կերպարաստեղծման հանգամանքները՝ անցյալի հերոսներին անմահացնելու վերաբերյալ՝ ավելացնում է. «Իմ ճանապարհորդության նպատակը ոչ միայն «Դավիթ Բեկը» կատարելագործելն է, այլ, որքան հնար է, նյութեր հավաքել Դավիթ Բեկից հետո հայտնված մելիքների կյանքից և գործունեությունից, որոնք կարող էին ծառայել ինձ առանձին վեպեր կամ պատկերներ ստեղծելու: Որքան թանկագին է մեզ համար այդ ժամանակների հերոսների հիշատակը անմահացնելը, այնքան ցավալի կորուստ է, երբ նրանք կմոռացվին, կանհետանան մեր անհոգությունից»³:

Բ) «ԽԱՄՍԱՅԻ ՄԵԼԻՔՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ» ԵՐԿԻ ԿԵՐՊԱՐՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Աշխատանքի **առաջին գլխի երկրորդ մասի երկու ենթամասերում** քննումներ է կատարվում 200-ամյա վիպական ու պատմական Արցախի նկարագիրը վերհանելու, գեղարվեստական և պատմական հերոսների ներքին բարդ ներաշխարհը, դրամատիզմով լի կերպավորումները ամբողջացնելու ուղղությամբ:

Առաջին գլխի երկրորդ մասն իր երկու ենթահարցերով ներկայացնում է Բաֆֆու «Խամսայի մելիքությունները» երկի գրականագիտական, մեթոդաբանական մանրագնին քննությունը:

Բաֆֆին մեծ գեղազետ է, մեծ փիլիսոփա, մեծ հայրենասեր, գրական յուրաքանչյուր փաստակտոր հայթայթելու, փոքր արձակի ամեն մի հյուլե բացահայտելու, ժամանակի կնիքը պահելու, դրանք իրենց նախկին փայլով ներկայացնելու նախանձախնդիր ու հմուտ շարադրող, ընթերցող լայն շրջանակին ժամանակաշրջանի հետ հաղորդակից դարձնելու, երկու հարյուր տարվա վաղեմությամբ ժամանակի մարդկանց շունչ ու արյուն տալու, բարդ ու դրամատիզմով լի նրանց հոգեկերտվածքը, ճակատագիրը մեկնելու, նրանց խոսեցնելու, ժամանակի ներհասարակական բարքերը քննելու պատրաստ մեծ վիպասան:

Առաջին գլխի երկրորդ մասի երկրորդ ենթահարցը, այսպիսով միտված է բացահայտելու այս կամ այլ տիպի հարցադրումներ, մեկնելու հոգեբանական նուրբ անցումներով զարգացող կերպարների համակարգը, ցույց տալու արցախյան անձնավորված բնությունը, այդ ամենի օգնությամբ

³ Նույն տեղում, էջ 45:

վերհանելու Արցախի Խամսայի մելիքությունները, արցախահայության նկարագիրը՝ ժամանակաշրջանի տիպական համապատկերին զուգահեռ:

Վիպասանը հետաքրքիր գեղարվեստական անդրադարձներ է կատարում Արցախի դրամատիզմով լցված իրադարձությունների շուրջ, անձնավորում, տիպականացնում է թե վիպապատմական հերոսներին, թե «Արցախամուր» (Բուզանդ) աշխարհի բնությունը, խորությամբ քննում է երկրամասի սոցիալական, վիպական, ազգագրական, էթնիկ կողմը, մշակութային կյանքը, տալիս հայրենիքի տարուբերվող ճակատագրի նկարագիրը:

«Վերջաբան»-ում նա ներկայացրել է Խամսայի մելիքների պատմությանը, գեղարվեստական նկարագրին վերաբերող գիրք գրելու իր նպատակը, գերխնդիրը, ճանապարհորդության մղվելը՝ նյութեր հայթայթելու ձգտմամբ, ձեռք բերված աղբյուրների ցուցումով, որպեսզի ապացուցի նրանց փաստացիությունը:

Գ Լ ՈՒ Խ Ե Ր Կ Ր ՈՐ Դ

XIX ԴԱՐՈՒՄ ԱՐՑԱԽԻ ՄԱՍԻՆ ՄԵՐԺՎԱԾ ԳԻՐՔԸ (ԱՊՐԵՍ ԲԵԿՆԱԶԱՐՅԱՆ, «ԳԱՂՏՆԻՔ ՂԱՐԱԲԱՂԻ»)

Հայ գրականության պատմության մեջ այլևայլ ժամանակաշրջաններում արձանագրվել են բանավիճալի սուր բնույթ կրող գրական բազմաթիվ երևույթներ՝ հարուցելով ժամանակի գրական շրջանակների՝ գրողների, գրաքննադատների, հրապարակախոսների իրարամերժ, հաճախ հակասական կարծիքները:

Նման ճակատագիր վիճակվեց նաև Ապրես Բեկնազարյանի «Գաղտնիք Ղարաբաղի» գրքին:

Ատենախոսության **երկրորդ գլուխն** ունի «**XIX դարում Արցախի մասին մերժված գիրքը (Ապրես Բեկնազարյան, «Գաղտնիք Ղարաբաղի»)** վերտառությունը: Այն երկու՝ «**երկի ծագումը և գրական արձագանքները**» և «**«Գաղտնիք Ղարաբաղի» գրքի գրական արժեքը**» մասերից է բաղկացած:

Առաջին մասում քննությունը գրքի ծագումնաբանությանը և եղած գրական արձագանքներին է վերաբերվում:

Սանկտ Պետերբուրգում, Մ. Բարխուդարյանի՝ գրաբարից աշխարհաբար փոխադրությամբ, Բաքվի մեծահարուստ (Մեծ Սյունիքի ծնունդ) Առաքել աղա Ծատուրյանի մեկենասությամբ հրատարակված Ա. Բեկնազարյանի «Գաղտնիք Ղարաբաղի»-ն գիտական ուսումնասիրության երկրորդ գլխի առաջին և երկրորդ մասերի **քննվող առարկան է**, նույն՝ XIX

դարի հայ գրականության պատմությունն է՝ Արցախին վերաբերող գրականության առանձնացումով:

Եվ այսպես. XIX դարում գրական աղմկահարույց երևույթ հանդիսացող երկի՝ Ա. Բեկնազարյանի «Գաղտնիք Ղարաբաղի» գրքի վերաբերյալ տարաբնույթ կարծիքներ, գրախոսություններ են տպագրվել պարբերական մամուլում («Մշակ», «Մեղու», «Արծազանք», «Մեղու Հայաստանի»)՝ դրվատական և մերժողական, ապա հրատարակվել են Րաֆֆու «Գաղտնիք Ղարաբաղի» մատենախոսությունը, Լեոյի «Վէ՛պ թէ պատմութիւն»-ը, Մ. Բարխուդարյանի «Քննադատութիւնն քննադատութեանց» քննական գիրքը, Հայկունու «Ուղեգնացական ակնարկներ»-ը, որում խոսվում է նաև Աբրահամ և Ապրես Բեկնազարյանների և վերջինիս հեղինակությամբ 1886 թ. Սանկտ Պետերբուրգում հրատարակված «Գաղտնիք Ղարաբաղի» գրքի մասին: Հեղինակն այն համարում է անգնահատելի գանձ՝ **«մի անգին գիւր»**, որի սյուժեն և գաղափարական բովանդակությունը ներկայացնում են XVIII-XIX դարերում Ղարաբաղում տեղի ունեցած քաղաքական դրամատիզմով լի ծանր իրադարձությունները: Այնուամենայնիվ, ինչպես նկատելի է գրական արժեքավոր այս գիրքն ամբողջությամբ մերժվել է:

XIX դարի հայ գրական քննադատության մեջ կարևորություն էր ստացել (ոչ գիտական, բայց գրական դաշտում՝ իրական փաստ) մի երևույթ. անկախ նրանից, թե հրապարակի վրա հայտնված գրական որևէ ստեղծագործություն ժանրի է պատկանում, ինչպիսի մասնագիտական սկզբունքներ ունի, ինչպիսի տիպաբանություն, հեղինակի ինչպիսի արժեքներն է ներկայացնում՝ կարևոր չէ. կարևորը վիպական տարրի առկայության դեպքում այդ ստեղծագործությունը անարժեք հայտարարելն է, պատմականի դեպքում՝ արժեքավոր, գիտականորեն ապացուցելի համարելը. կամ էլ տվյալ երկը հակառակ, մի այլ սեռին դասելը: Կարծում ենք, որ դա գալիս է **մեթոդաբանական ուղղվածությունից**, քանի որ թե եվրոպական, թե հայ գրականագիտության մեջ գերիշխում էր **պատմական մեթոդը**:

XIX դարն ընդհանրության մեջ կարելի է մեթոդների հեղափոխության դար համարել: Այդ ընթացքում գրականագիտական դաշտում գործում էին **կենսագրական, կառուցվածքաբանական, նշանագիտական, աղբյուրագիտական, պատմական** և այլ մեթոդներ:

Մեթոդաբանական հարցադրումներին վերաբերող վերոդիտվածի վկայությունը նաև հետևյալն է. Հայկունին վիպական ամուր ողնաշար ունեցող Ապրես Բեկնազարյանի «Գաղտնիք Ղարաբաղի»-ն համարում է «պատմական մի անգին գիւտ», Լեոն հետևյալ հարցադրում է անում՝ այն «Վէ՛պ թէ պատմութիւն» է՝ պատճառաբանելով և գրքում առկա ընդունելով, ներկայացնելով վիպական դեպքերի ու անսովոր, «հնարովի» հերոսների զարմանք հարուցող օրինակներ, ականայից երկը գնահատելով միայն

գրականագիտական տեսանկյունից, այդ կերպ փորձելով այն անարժեք համարել, տալով գրականագիտական և պատմական մի շարք անարդար բնորոշումներ: Իսկ Րաֆֆին և Լեոն «Գաղտնիք Ղարաբաղի»-ն արտագրություն են համարում «Խամսայի մելիքություններից», որը ճիշտ եզրահանգում չի կարելի համարել: Գրքի փոխադրողը՝ Մ. Բարխուդարյանը, ժամանակաշրջանի վերոդիտված բարքերից երկնչելով և տարակուսելով՝ հարցադրում է, թե այն ընտիր գո՞րծ կընդունեն, թե՞ հոռի, վիպական, թե՞ պատմական երկ՝ արժանի հայ գրականությանը՝ թողնում է ապագա հմուտ մասնագետների գնահատությանը, իր հերթին «Քննադատությունն քննադատութեանց» քննախոսությունում, վիպապատմական, քննական փաստերով ապացուցում գրքի բարձրարժեքությունը և հերքում Լեոյի միտումնավոր կերպով տրված մերժումները: Կամ ինչպես մի այլ օրինակում Րաֆֆին է իր կողմից գրականության արժեք համարվող «Խամսայի մելիքությունները» անվանում «պատմական ուսումնասիրություն», հավանաբար նկատի ունենալով տվյալ ժամանակաշրջանում գրականագիտության մեջ իշխող պատմական մեթոդի կարևորությունը:

Այսպիսով՝ կարելի է եզրահանգել, որ ցանկացած ժանրով գրված յուրաքանչյուր երկ ունի հերքելի և ապացուցելի կողմեր, տիպական գծեր, ժամանակաշրջանի հասարակական, գրական կյանքը ներկայացնող մշակութաբանական բնութագիր՝ ժանրային տարբերակումներով հանդերձ՝ գիտական է ու արժեքավոր, տեսականորեն՝ քննելի, մեկնելի և գնահատելի: Հարցադրումը տարածվում է քննվող բոլոր գրքերի վրա:

Հարցի կապակցությամբ, ատենախոսության առաջադրված դրույթների պարզեցման ու խնդիրների քննման ընթացքում, մեզ օգնել են ինչպես հատկանշված, այնպես էլ նաև նշանագիտական, կառուցվածքաբանական մեթոդները, որոնց դեպքում նյութի քննությունն ու արժևորումը կատարել ենք թե պատմագիտական դաշտում, թե գրականագիտական՝ մնալով վերջինում:

Աշխատանքի **երկրորդ գլուխը**, որն ինչպես դիտել ենք նվիրված է XIX դարավերջին մերժված գրականության բարձր արտահայտություն հանդիսացող «Գաղտնիք Ղարաբաղի»-ին, անշուշտ ունի իր ժողովրդին ծառայելու, հայ գրականագիտական միտքը հարստացնող վարկանիշ ձեռք բերելու իրավունք: Անցնող ժամանակների հոսքը գրեթե միշտ բերում է արժեքների վերագնահատությունների: Կարծում ենք այդ ճակատագիրը կունենա նաև «Գաղտնիք»-ը:

«Գաղտնիք Ղարաբաղի»-ի նյութն ամփոփված է երկու հատորում: Գրքի փոխադրող Մ. Բարխուդարյանը նկատում է, որ աղբյուրագիտական տեսակետից ավելի բարձրը երկրորդ հատորն է, որում «ժամանակագրական կարգաւ, գեղեցիկ դասաւորուած են թէ՛ պատմական

անցքերն և թե՛ զանազան մարդիկներից գրուած բոլոր նամակներն: Իսկ առաջին հատորում ընդհակառակն է տեսնուում»⁴:

Մ. Բարխուդարյանը անհերքելի է համարում «Գաղտնիք»-ում ներկայացրած վիպապատմական փաստերը հայ-ռուսական, հայ-պարսկական, հայ-թուրքական առնչությունների շուրջ և այլն:

Եվ այսպես, քննախոսության մեջ Ա. Բեկնազարյանի «Գաղտնիք Ղարաբաղի»-ն 135-ամյա հեռավորությունից առաջին անգամ փորձում ենք վերարժևորել, վերլուծության ենթարկել համադրական և աղբյուրագիտական, պատմահամեմատական ասպեկտներում՝ ձգտելով վեր հանել նրա մեջ անփոփված ռացիոնալ հատիկը: Ուստի և կարևորում ենք աշխատանքի **գիտական ողնաշարը, արդիական բնույթն ու գործնական արժեքը, ընդունելի վարկածը**⁵ ներկայացնելով «Գաղտնիք Ղարաբաղի»-ն որպես **վերազնահատման արժանի գրական ուշագրավ երկ**:

Գրքում ներառված են նաև XVIII - XIX դդ. հայ բանահյուսական, գուսանական, գրական երկերի բացառիկ նմուշներ և հեղինակներ (Սայաթ-Նովա, Առստամ բեկ, աշուղ Ղարա, Միսկին-Բուրջի և այլն), որոնց քննությունն ու մեկնությունը ևս այս համատեքստում ներկայացնում ենք գրականագիտական մտքի ուշադրությանն ու գնահատմանը:

Ուսումնասիրության **նպատակը և խնդիրները ժամանակաշրջանի գրական համապատկերի, ժամանակի ու ազգային, անհատական ոճերի** վերհանումն է, կուսակից խմբակցությունների հարկի և անհարկի պայքարը, ինչի հետևանքով մերժվել են գրական մշակներ ու ստեղծված երկեր:

«Գաղտնիք Ղարաբաղի» գրքի հրապարակ իջնելու և մերժվելու ժամանակագրությունը քննել ենք թե՛ գրքի վերաբերյալ հրատարակված քննական արձագանքների վերլուծության և թե՛ պարբերական մամուլում ծավալված բանավեճի լույսի ներքո:

Ճշմարտությունը պահանջում է ասել, որ ժամանակի իրարամերժ բանավեճի կարծիքների հանգույցում հայտնվել է մի գիրք, որն ազդարարեց Արցախ-Ղարաբաղի հետ կապված խորապես ուսանելի դասերը: Եվ, այնուամենայնիվ, գիրքն անէացավ մոռացության մշուշում՝ առավելապես դասվելով հետաքրքրությունից դուրս գրական զեղծարարության շարքը: Սակայն ժամանակի ընթացքում վերստին հայտնվեց հետազոտողների ուշադրության կենտրոնում և վերաիմաստավորվեց Արցախի գրականության և պատմության աղբյուրագիտական ցանկում՝ որպես **գիտական հարցադրում**:

Ժամանակաշրջանի համապատկերում քննության ենթարկելով XIX դարավերջի հայ գրականության մեջ գոյություն ունեցող որոշակի չվճռվող,

⁴ Բեկնազարեանց Ա., Գաղտնիք Ղարաբաղի, Սանկտ Պետերբուրգ, 1886 (այսուհետև՝ Բեկնազարեանց Ա.), էջ Է:

քննություն չբնոող հարցերի մեկնումը՝ կարևորել ենք **թեմայի համապատասխան մշակվածության հարցը** և աշխատանքի բերած անհերքելի գիտական անդրադարձը: Իսկ ուսումնասիրության կարևորությունն ակնբախ է մի քանի առումներով:

Այդ ամենը ձգտել և ներկայացրել ենք համադրաբար, գիտական գնահատումներով: Մեկնաբանական օղակներում ուշադրություն ենք դարձրել և՛ «Գաղտնիք»-ի, և՛ Րաֆֆու ու Լեոյի, և՛ Մ. Բարխուդարյանի, Հայկունու երկերի գաղափարական-քննական ուղղվածությանը, նրանց առանձնահատկություններին, պատմական, վավերագրական, տեսական ընդգրկումներին, մեթոդաբանությանն ու օգտագործված մեթոդներին, տիպաբանական, լեզվաոճական յուրօրինակությանը, արցախահայության կյանքի բազմակողմանի մեկնաբանմանը XVIII-XIX դդ. քաղաքական ծանր իրավիճակի նկարագրին զուգահեռ:

Դրանք տեսաքննական մտքի դիտանկյունից նոր էջ են բացում նյութի մեկնության ընթացքում:

Աշխատության քննության նման հիմքը **կիրառված սկզբունքների** ուսանելի կողմերն է հատկանշում, քանի որ դրանք գրականագիտական համակողմանի վերլուծություններ են՝ սինթեզված պատմաբանասիրական, տեսաքննական, մեկնողական և արժեքաբանական աղբյուրներով:

Խաչաձևվել, զուգահեռվել, համադրվել են գրականության ու փիլիսոփայության, պատմության, գեղարվեստի առանցքները, քննադատության ու բանավեճի սահմանները:

Ուսումնասիրության **փորձաքննությունը** զարգացել է փուլային բաժանումներով:

Աշխատանքի տարաբնույթ քննական հարցադրումները, կարևոր առանցքներն առանձին հողվածներով հրատարակվել են պարբերական մամուլի օրգաններում, թերթերում, գիտական հանդեսներում և միջազգային գիտաժողովներում, կոնգրեսներում, արտասահմանյան պարբերականներում:

Ուսումնասիրության գիտական **մշակվածությանն** անդրադառնալով՝ երկրորդ ենք, որ գրքի շուրջ գրվել են թե՛ կարծիքներ, թե՛ գրախոսություններ, թե՛ այլալ կարգի մեկնություններ՝ լրագրային, հրապարակախոսական և առանձին աշխատանքներ, որոնցից են՝ Րաֆֆու «Գաղտնիք Ղարաբաղի» մատենախոսությունը (1886), Լեոյի «Վե՛ պ թե պատմութիւն»-ը (1887), Մ. Բարխուդարյանի «Քննադատութիւն քննադատութեանց»-ը (1888), Հայկունու «Ուղեգնացական ակնարկներ»-ը (1886):

Րաֆֆու, Լեոյի և նրանց կողմնակիցների կողմից մերժվել է «Գաղտնիքը» և անգամ չի թույլատրվել մեկնաբանական որևէ այլ կարծիք տպագրել մամուլի էջերում:

Սակայն ժամանակն է ցույց տալ իրերի ու երևույթների իրական պատկերը, մեկնել այդպիսի գործերում հաճախ լրագրության դրսևորած կոպիտ դերը, մասնավոր և կուսակից անձանց ու պարբերականների անհանդուրժողականությունը, կուսակցական առճակատումները, պոլեմիկայի դիքորոշումը, բանավեճի պահանջվող սկզբունքների խախտումը, որոնց հետևանքով մերժվել են թե՛ արժեքավոր գրքեր, թե՛ հեղինակներ: Այսպիսի ճակատագրի են արժանացել նաև ժամանակաշրջանի գրապատմական կյանքի աղմկահարույց երկը՝ Ա. Բեկնազարյանի «Գաղտնիք Ղարաբաղի»-ն ու նրա թարգմանիչը:

Ուստի գիտական այս աշխատության մեկնումը, **վերաթևորումը** խիստ **հրապրապ** է դառնում գրականագիտական, մեթոդաբանական, արցախագիտական մտքի փակ էջերի վերհանման, վերաթևորման տեսանկյունից:

Րաֆֆին իր մատենախոսության մեջ հակված է դիտարկելու, հերքելու և հաստատելու «Գաղտնիք»-ի վերաբերյալ շատ հարցեր, որոնք ըստ եղած բնագրային նյութի քննության ենք ներկայացրել: Նույնը Լեոյի հարցադրումների դեպքում է կատարված:

Միակ ճիշտ, լուսաբանող աղբյուրը հարցի առնչությամբ Մ. Բարխուդարյանի գիրքն է, որտեղ հեղինակը մեկ առ մեկ ցույց է տալիս նյութի նկատմամբ Լեոյի այսպես ասած «տիասությունը», աչառու լինելը, նրա կողմից իրեն հայիոյելը, պատմությանը անտեղյակ լինելը և այլն:

Հարցի ճիշտ մեկնաբանությունը հաստատող ևս մի աղբյուր, որից մենք հատուկենտ փաստեր էինք բերել, Հայկունու 2010 թ. լույս տեսած «Ուղեգնացական ակնարկներն» է (**առաջին հրատարակությունը՝ 1886 թ.**): Հեղինակը ճիշտ մեկնաբանություններ է տալիս մեզ հուզող հարցերին՝ գնահատելով «Գաղտնիք»-ի գիտական արժեքը, պատմական հավաստի տեղեկությունները, ու թե ինչպես է նա իր ուղևորության ընթացքում փորձել տալ «Գաղտնիք»-ի հեղինակի՝ Ապրես Բեկնազարյանի հետ կապվող հարցերի պատասխանները, պարզել նրա գերեզմանի տեղը:

Պատմությունն ամփոփված է **երկու մասում (հատորում)**:

Նյութը բնագրային և քննական, մեկնաբանական ու արժեքաբանական համակարգերով, մեթոդաբանորեն վերլուծության ու վերաթևորման ենք ենթարկել ու փաստացի տվյալներով ապացուցել, որ այն անչափ արժեքավոր վիպական աշխատություն է՝ պատմականի որոշակի շաղխտով, որն իր մեջ ամփոփում է բարձր իշխանությունների, պաշտոնատար անձանց կողմից գրված վտանգավոր հաղորդագրությունների, **հատկապես զաղտնի նամակների**, արքայական հրովարտականների և այլ կարևոր փաստաթղթերի տեսքով 1795-97, 1826-28 թթ. ռուս-պարսկական պատերազմի պատմական իրադարձություններ, որի բազմաթիվ էջերում պատկերված են արցախահայության հոգևոր արարումների, Խամսայի

մելիքների, հոգևոր առաջնորդների հետապնդած խնդիրների, իրար հետ ունեցած վեճերի, կռիվների, անհամաձայնությունների պատկերը: Ներկայացված են նաև այդ հողի վրա օտար մարմնի՝ Ղարաբաղի խանության ստեղծման պատմությունը, Իբրահիմի և Մեհտի Ղուլիի ռճրագործությունների բազմապիսի նկարագրությունները, նրանց կողմից կատարված անօրինությունների, մելիքների և հոգևոր իշխանությունների հանդեպ կազմակերպած անթիվ խարդախությունների, Ղարաբաղի հողերի յուրացման, դրածո մելիքների ու հոգևոր այրերի դավաճանական քայլերի մասին եղած փաստերը՝ ընդդեմ հարազատ մելիքների և ժողովրդի: Գրքում պատկերված են նաև պարսից արշավանքների, Ղարաբաղի քաղաքական կյանքին վերաբերող դեպքերի, Շուշիի պաշարման, Թիֆլիսի ավերման պատմությունները, Խամսայի մելիքների պայքարի արտացոլանքները՝ հայրենիքի ազատության, միաբանության, նրանց ցուցաբերած ռուսամետ և պարսկամետ կողմնորոշման փաստերը, Ղարաբաղի քաղաքական ճակատագրի հետաքրքիր ու արժեքավոր նկարագրությունները, Աղա Մահմեդ խան, Ֆաթալի շահ, Աբաս Միրզա և այլ օտար տիրապետողների վիպապատմական կերպավորումը, որոնք փորձել և փորձում էին իրենց կապված տեսնել Ղարաբաղի քաղաքական ճակատագրին և իշխող նրան:

Այս ամենը Ա. Բեկնազարյանի «Գաղտնիք»-ում հզոր, փաստացի, հաճախ՝ խառնիխուռն, վերիվարումներով լի վիպապատմական տեսադաշտ է ստեղծում մեր հայրենիքի պատմության վերհանման համար, որի ո՛չ մի դրվագը, ո՛չ մի դեպքում արտագրություն անվանել չի կարելի՝ ո՛չ Ռաֆֆուց, ո՛չ ուրիշ մի այլ աղբյուրից: Պե՛տք է կարողանալ վեր հանել վիպականությամբ և պատմականությամբ կառուցված նրա ամուր ողնաշարը և ընդունել նրանում ամփոփված արցախցիների վիպական դրվագներով լի կյանքի բազմաբնույթ նկարագիրը, պատմական փաստերի հարազատությունն ու ճշմարտացիությունը, ինչի օբյեկտիվ քննությունն ու գնահատությունը եղել է մեր ուշադրության կիզակետում:

Երևույթի բացահայտմանը օգնում են նաև «Գաղտնիք»-ի երկրորդ հատորում ամփոփված վիպական երանգ կրող տեղեկությունները հեղինակի կենսագրության դրվագների մասին, որոնց մեծ մասը համարյա կատարվում է պարսից պալատում, և որոնք իրենց հերթին ճշմարտապատում և գեղարվեստական երանգ են հաղորդում գրքին ու նրա ներկայացրած փաստերին՝ կապված Ղարաբաղի քաղաքական իրադարձություններին, հայր և որդի գործիչների՝ Աբրահամ և Ապրես Բեկնազարյանների՝ շահի պալատում վաստակած հարգանքի ու վստահության, ունեցած բարձր պաշտոնների (Աբրահամը՝ Իբրահիմը, ի վերջո պարսից պետության մեծ ներքինապետը, Ապրեսը՝ Ալլահվերդին, պարսից շահի ստորագրած փաստաթղթերի, արձակած հրովարտակների գլխավորը և գաղտնի գրագիրը դարձան), պարսկահայությանը բազմապիսի օրինակներով

սատարելու, օգնության ձեռք մեկնելու, մասնավանդ՝ հայրենիքին մատուցած մեծ ծառայությունների բացահայտմանը որդեգրվեցին, որոնք իրենց հերթին օգնում են վեր հանելու Ղարաբաղի քաղաքական, դրամատիկական կյանքի ճշմարիտ նկարագիրը, կերպավորում նրա դառնություններով լի ճակատագիրը:

Ուսումնասիրության **կառուցվածքը** բարդ է, բոլոր մասերն իրար շաղկապող օղակներ ունեն, նրա **վերարժևորումը** գիտական **հրապապ** ու **արդիական հնչեղություն** ունի, **պրակտիկ արժեք**, իսկ առաջադրված **հարցերն** ու **խնդիրները, մեթոդը, վարկածը՝** ապացուցելի եզրեր:

Գրականագիտության մեջ բոլոր աղբյուրների քննությամբ ներկայացվող XIX դարավերջի հայ գրականության **փակ էջը** դնում ենք **վերազնահարման:**

Այն գիտական սթափ մոտեցում է պահանջում և ոչ թե անիմաստ հերքում, մերժում: Որքանով որ յուրաքանչյուր հայի համար թանկ է իր հայրենիքի պատմությունը, այնքանով «Գաղտնիքը», նրա մեջ ամփոփված արցախահայության ճակատագրի բազմապիսի դրվագները պետք է գնահատվեն ու վերադարձվեն ժողովրդին՝ նրա շահերին ծառայելու սրբազան առաքելությամբ:

«Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամ»-ի գիտական ուսումնասիրությունների 2010 թվականի գիրք Ժ թիվ 13 համարով հրապարակ իջած Հայկունու (Գեղամյանցի) արժեքավոր **«Ուղեգնացական ակնարկներ»** աշխատասիրությունը հայտնություն եղավ՝ մեր կողմից վերարժևորման դրված Ա. Բեկնազարյանի «Գաղտնիք Ղարաբաղի» գրքի՝ ուշադրության ու հաստատման արժանի կարևոր առանցքների լուսաբանման համար:

Արցախի Խնածախ գյուղից սերված Աբրահամ և Ապրես Բեկնազարյանների ջանադրությամբ, հաստատականությամբ, սրբազան ուխտապահությամբ, խիզախամբ ստեղծվել է «Գաղտնիքը» (Հայկունու վկայությամբ՝ **Րաֆֆու «Խամսայի մելիքություններից» մեկ տարի առաջ**): Հայր և որդի գործիչները եղել են ույալ, հայրենասեր, ավանդապահ հայորդիներ: Աբրահամը Պարսից Դռանը ցուցաբերած իր մեծ ծառայություններով և ստացած բարձր պաշտոններով բազմիցս պաշտպանել, աջակցել, օգնել է իր հայրենակիցներին, եղել է մեծ զորավար հայրենասեր, մի այլ մեծ հայրենասերի՝ մելիք Մեջլումի հավատարիմ զինվորը, զորավարը, հայրենի սրբությունների, հիշատակների, զորության, հայրենիքի անկախության պաշտպանը և նախանձախնդիրը: Նրա հորդորով ու օգնությամբ և նաև պարսից զորավար **Հովհաննես մելիք Հայկազյանցի (Մելիքսեթ պատմագրի պապը)** խորհրդով գրվել է այդ ամենի բարձրակետը հանդիսացող «Գաղտնիք Ղարաբաղի»-ն: Նա մեծարվել ու գնահատվել է պարսից Աղա Մահմեդ, Ֆաթալի, Աբաս Միրզա

շահերից և իր մահկանացուն է կնքել՝ մեծ պատվով ու շուքով թաղվելով Թավրիզում՝ Հայոց եկեղեցու բակում: Ապրեսը եղել է շահի դիվանի քարտուղարը:

Ապրես Բեկնազարյանը հանդիսանում է «Գաղտնիք Ղարաբաղի»-ի հեղինակը, ով գիրքը գրելու ժամանակ օգտվել է թե՛ հոր հավաքած արժեքավոր նյութերից, և թե՛ խորհուրդներից:

Այս ամենը հետազոտել, քննել և վերաթևորել ենք «Գաղտնիք Ղարաբաղի»-ի գնահատման ընթացքում, ընդգծել դրա պատճառները: Իսկ այսօր Մ. Բարխուդարյանի «Քննադատության քննադատությանց» մեկնությանն ավելանում է Հայկունու «Ուղեգնացական ակնարկներ»-ում ամփոփված արժեքավոր նյութը, որը շատ կողմերով լույս է սփռում խնդրո առարկայի վրա: Այն **գիտական արդիական վերաթևորման հրապրապություն** ունի, գիտական **հիմնախնդիր** է, հանդիսանում է որպես **քննության օբյեկտ**, և հարցի **մշակվածությամբ** դիտվում է «Գաղտնիք»-ի կարևոր առանցքներից, աղբյուրներից մեկը:

Եվ ո՛չ միայն. այն գրականագիտական, **հայագիտական** մտքի **արցախագիտության** ճյուղի հարստացմանն իր մեծ ավանդն է բերում շատ ու շատ տեսանկյուններից, հաստատապես կանգնում Մակար Բարխուդարյանի՝ տարածաշրջանը ներկայացնող «Արցախ» բարձրարժեք գրքի կողքին, գերազանցում Սարգիս Զալալյանցի «Ուղեւորություն ի Մեծն Հայս» աշխատությանը իր արծարծած խնդիրներով, ներկայացրած բնագավառներով, դիտողականությամբ, քննական մտքով, նյութի նկատմամբ դրսևորած պատասխանատվությամբ:

Սա այն դեպքն է, երբ հաստատվում է, որ երբեք ո՛չ մի եռանդ, ստեղծված գիտական արժեք, մշակի կատարած ճշմարտացի աշխատանք, պահվածք չի՝ կորչում, չի՝ անտեսվում՝ նախանձախնդիրների կողմից երևան հանվելով, գիտական արժևորում ստանալով:

Երկրորդ գլխի առաջին մասը ներկայացնում է հակասական ճակատագիր ունեցող և լեգենդ դարձած այդ գիրքի համակողմանի քննաբանությունը:

Իսկ աշխատանքի **երկրորդ գլխի երկրորդ մասը** նվիրված է «Գաղտնիք Ղարաբաղի»-ի գրական արժեքի մեկնությանը:

Ուսումնասիրության **երկրորդ գլխի երկրորդ մասը՝ ««Գաղտնիք Ղարաբաղի» գրքի գրական արժեքը»**, ներկայացնում է XIX դարի հայ գրականության հակասական կարծիքների ենթարկված գիրքը՝ ժամանակաշրջանի գրականագիտական հարցադրումների բազմաբնույթ քննությամբ և դիպաշարի, կերպարների համակարգի լուսաբանությամբ: Այն քննվում է հեղինակային բնագրի մեկնումներին զուգահեռ, որոնք հարցի վերաբերյալ ուրույն լուսամուտներ են բացում, գրականագիտական հարցադրումներ ներկայացնում:

Որոշ ճշտումներ կատարելով՝ փորձել ենք **վերագնահատել** այն:

Ուսումնասիրության **երկրորդ գլխի երկրորդ՝ ««Գաղտնիք Ղարաբաղի» գրքի գրական արժեքը» մասը** միաժամանակ վերաբերվում է Ապրես Բեկնագարյանի գրքի համակողմանի՝ բնագրային և տեսական աղբյուրների քննությանն ու վերլուծությանը, վերարժևորմանը, պատմիչի՝ Ապրեսի անձնական կյանքի կերպավորմանը՝ կարևորություն ունեցող իրադարձությունների մեկնությանը, որոնցից շատերը տեղի են ունեցել հեղինակի՝ պարսից արքաների աթոռանիստում գործելու, հոր՝ Աբրահամի հետ այնտեղ պաշտոնավարելու ժամանակ:

Երկրորդ գլխի երկրորդ մասի բազմաբնույթ իրադարձությունները լույս են սփռում հեղինակի ինքնության, շահի պալատում պաշտոնավարության, Ղարաբաղի քաղաքական կյանքում խաղացած դերի, քաջարի զորական հոր՝ հայրենապաշտ Աբրահամի՝ 1795-97 թթ. ռուս-պարսկական պատերազմին մասնակցելու, «Գաղտնիքում» պատմագրված փաստերի հավաստիության շուրջ, ամբողջության մեջ՝ Ղարաբաղի քաղաքական, վիպական ու պատմական կյանքի, դրամատիզմով լի ճակատագրի, Ղարաբաղի ժանտ ու խորամանկ խաների վիպական ու պատմական երանգներ կրող ոճրագործությունների, հարազատ և անհարազատ հոգևոր ու աշխարհիկ տերերի առճակատումների, մելիքությունների դառը ճակատագրի լուսաբանման տեսանկյունից, ինչը գրքի գեղարվեստականության ու հավաստիության, և հեղինակի պատկանելության վերաբերյալ կասկածի նշույլ չի թողնում՝ երկասիրության վերագնահատումը դարձնելով հույժ անհետաձգելի:

«Գաղտնիք»-ի ստեղծման հանգամանքների վերաբերյալ Մակար Բարխուդարյանի վարկածները մի որոշ հիմք տալիս էին Րաֆֆուն և Լեոյին՝ կասկած հայտնելու գրքի հեղինակային ինքնության և «սյուժեի» պատմական հավաստիության վերաբերյալ: Սակայն պատումի կենսագրական եղանակը և իրադարձությունների անմիջական արձագանքները վկայում են պատմական ժամանակի ու դեպքերի անմիջական ընկալման մասին, ինչը հագիվ թե կարելի է վերագրել Բարխուդարյանի հորինաբանությանը: Ինչ վերաբերում է Րաֆֆու փաստարկին, թե «Գաղտնիք»-ի որոշ էջեր ուղղակի նույնանում են «Խամսայի մելիքությունների» պատմությանը, ապա դա կարելի է վերագրել ոչ թե ուղղակի արտագրությանը, այլ պատմական դեպքերի ճշգրիտ ներկայացմանը, ինչը ինքնին հավաստում է «Գաղտնիք»-ի՝ որպես փաստագրական երևույթի արժեքավորությունը: Այս առնչությամբ թարգմանիչն առաջաբանում նշում է, որ «Գաղտնիք Ղարաբաղի»-ն կարող է մեծ լույս սփռել ոչ միայն Ղարաբաղի պատմական մթությանց վերա, այլև

Ռուսաց Անդրկովկասի պատմական մթությանց, որք գաղտնի կատարած լինելով ցարդ մնացած են անհայտության մեջ»⁵:

Այնուհետև Ապրես Բեկնազարյանը մանրամասն ներկայացնում է իր կենսագրությունը՝ ընտանեկան կացության, ծնողների և ծննդավայրի քնարական նկարագրով, անմոռաց հիշատակներով: Ընդգծելի է նրա անհատական ոճի երակը, հետաքրքիր նրբերանգները՝ միախառն ազգային ու ժամանակի ոճերին:

Այս առումով «Գաղտնիք Ղարաբաղի»-ն համարձակորեն կարելի է դասել գրական լավագույն արժեքների շարքը:

Քանի որ ժամանակի ոճի պահանջն այնպիսին էր, որ գրական, պատմական երկերի արժեքավորությունը որոշվում էր այն չափով, թե որքանով է այն պատմական, ուստի գրքերի հեղինակներն ընդհանրապես ու նրանց երկերին առնչվողները մասնավորապես ունեցել են այդ մտավախությունը. եթե ստեղծված գիրքը պատմական չէ՝ անարժեք է:

Հետևություն. առաջին հերթին դա գալիս էր գրականագիտական դաշտում պատմական մեթոդի առկայությունից, իշխող դիրքից:

Ըստ թարգմանչի՝ Մակար Բարխուդարյանի «Գաղտնիք»-ը «պատմագրություն» է, իսկ նրա հեղինակը՝ Աբրահամ Բեկնազարյանը, «հմուտ պատմաբան», «երևելի պատմագետ» եղած է...»⁶: Լինի հիշատակարան թե պատմագրություն, նամականի, բոլորն էլ յուրովի ունեն իրենց դրական արժեքը: Իսկ «Գաղտնիք»-ում տեսանելի են թե՛ պատմագրության՝ ժամանակագրության, տարեգրության, նամականու և այլ ժանրերի, թե՛ գրական, պատմական, բանասիրական, աշխարհագրական, ազգագրական, փաստագրական, դիվանագիտական ու այլ կարգի նյութերի, թե՛ Աղվանից թագավորական տան ծագման, իշխանական տների ծննդաբանության, թե՛ մելիքությունների առկայության անժխտելի փաստեր: «Գաղտնիք»-ը միաժամանակ բացահայտում է թե՛ պարսիկ, թուրք, ռուս և այլ ժողովուրդների հետ հարաբերությունների շերտեր, ազատագրական պայքարի, պատերազմական իրավիճակների քննություններ, թե՛ վիպական շեշտադրումներով արցախյան հատվածի հայության կենցաղավարության, հոգևոր արարումների, պատմության, մաքառումների, տոհմիկ հարաբերությունների պարույրներ, իրավական-վարչական հարցադրումների, մանր-մունր վեճերի, արյունահեղ կռիվների նկարագրություններ, թե՛ դրաժոխանների, պարսից տիրապետության ու հայ մելիքների ուսուցանող պատմության, վիպապատմական հերոսների կերպավորումների, ճակատագրի ծանր անցումների անհերքելի փաստեր:

⁵ Բեկնազարեանց Ա., էջ Ժ:

⁶ Նույն տեղում, էջ է:

«Գաղտնիք»-ի պատմմաները, ինչպես նշեցինք, երկու հատորում են ամփոփված և, անշուշտ, ինչպես շեշտում է նաև Մակար Բարխուդարյանը, երկրորդ հատորի ժամանակագրության ընդունված կարգի պահպանման փաստն ապացույց է նրա բարձրարժեքության:

«Գաղտնիք»-ը սկսվում է 1795 թ. պատմական զարհուրելի դեպքերով, երբ պարսից Աղա Մահմեդ ներքինի (Ախտայ) շահը մեծաթիվ զորքով արշավում է Ղարաբաղ, կանգ առնում անառիկ Շուշիի մատույցներում, և, չկարողանալով այն գրավել, մելիք Մեջլումի առաջնորդությամբ արշավում է դեպի Թիֆլիս, քանի որ Իբրահիմն ու վրաց Հերակլ արքան դաշնակիցներ էին, իսկ մելիք Մեջլումը ցանկանում էր շահի օգնությամբ Իբրահիմին տապալել և Ղարաբաղի խանությունը վերացնել, Հերակլին էլ պատժել:

Պատմական վավերագրերը փաստում են, որ թե՛ պարսից շահերը, թե՛ ռուսաց կայսրերն ու այլ միապետեր Հայաստանում և մելիքական Արցախ աշխարհում վարել են վերջիններիս համակրանքը շահելու ընդգծված քաղաքականություն: Նույն կերպ վարվել են նաև հայ մելիքական տները՝ իրենց քաղաքական հետաքրքրություններից դրդված՝ ցանկանալով օրհասական պահերին օտար բռնակալների «մարդահաճ» համակրանքը շահել: Շատ հաճախ այդ երևույթը եղել է բախտորոշ երկու կողմերի համար էլ՝ իր քաղաքական դրսևորումներով հանդերձ:

Այս իրողության արտացոլումը մենք տեսնում ենք «Գաղտնիք Ղարաբաղի» երկասիրության մեջ:

«Գաղտնիք»-ը բացում է XVIII-XIXդդ. արցախահայության ծանր ու դրամատիկ ճակատագրի գիրքը, թող որ ինչ-որ տեղերում պատմականության որոշ հարցերի չհարաբերող ասպեկտներով, բայց երևույթները հիմնականում ներկայանում են ժամանակաշրջանը պատկերող և բնութագրող հատկանշական կողմերով:

Այս իմաստով, «Գաղտնիքն» իրավամբ կարելի է համարել Արցախի գրականության և պատմության բարձրակարգ ու անանց հուշարձաններից մեկը:

Հայ գրականագիտության ու արցախագիտության, կովկասագիտության մեջ համադրական և աղբյուրագիտական, պատմական, նշանագիտական, կառուցվածքաբանական, վերագնահատման մեթոդներով մենք փորձում ենք այն պատմաբանասիրական, գրականագիտական, տեսական սկզբունքներով քննության ենթարկել և վերարժևորել գրականության ու պատմության փիլիսոփայության համապատկերում՝ ազգային գաղափարակառուցի հիմնախնդրին զուգահեռ վերհանելով մելիքությունների պատմական առաքելությունը, գրական և պատմական դիմագիծը, նրանց հասարակական, քաղաքական ճակատագրի ծանր նկարագիրը:

ԱՐՑԱԽԸ ՄՈՒՐԱՑԱՆԻ ԳԵՂԱՐԿԵՍՈՒՄ

Ուսումնասիրության **երրորդ գլուխն (Արցախը Մուրացանի գեղարվեստում)** իր **երեք մասերով**, նվիրված է Մուրացանի Արցախի պատմությունը, գեղարվեստական նկարագիրը ներկայացնող **երեք երկերի (Մաս I. «Բաղդասար Մեդրապոլիսի Հասան Ջալալեանցի համառօպ կենսագրութիւն», Մաս II. «Ռուզան կամ հայրենասեր օրհորդ», Մաս III. «Խորհրդավոր միանձնուհի»)** քննությանը:

XIX դարի հայ գրականության մեջ Արցախի թեման ներկայանում է նաև հոգևոր դասի գրապատմական կենսապատումի ժանրի բացահայտմամբ, որի առանձնադիտվող նմուշներից է **երրորդ գլխի առաջին մաս կազմող** վերոդիտված երկը՝ **«Բաղդասար Մեդրապոլիսի Հասան Ջալալեանցի համառօպ կենսագրութիւն»-ը**, որը ներկայացնում է Աղվանից կաթողիկոսական տան վերջին ժառանգորդի՝ Բաղդասար մետրոպոլիտի կերպավորումը, ծանր փորձություններով ու մաքառումներով լի ազգանվեր վարքը, հերոսական նկարագրի բազմապիսի դրսևորումները, հսկայածավալ գործունեությունը Արցախի ազգային գաղափարակառույցի, մշակութային, գրական, հոգևոր, իրավական, կրթական, հրատարակչական, լուսավորական կյանքի մայր երակում:

Երկը հեղինակը ստորագրել է «Գրիգոր Տէր Հովհաննիսեանց»⁷:

Գրականագիտական մեթոդների ձևավորման գործում նոր առաջընթաց է արձանագրում XIX դարը:

«Բաղդասար Մեդրապոլիսի Հասան Ջալալեանցի համառօպ կենսագրութիւն»-ը գրված է Եվրոպայում ծնունդ առած, հայ և համաշխարհային գրականագիտության, մեթոդաբանության մեջ տարածված գրականագիտական առաջին՝ կենսագրական մեթոդով:

XIX դարի հայ գրականության մեջ Արցախն ու նրա քաղաքական ծանր ճակատագրի բացահայտումը նշանավորվում և անձնավորվում է Բաղդասար մետրոպոլիտի վաստակի ու թողած փառավոր դասերի կերպավորմամբ: Արցախցին իր խոր երախտագիտությունն ու հարգանքը, սերն է տարփողում իր սիրելի հովվապետի, բազմաշնորհ հոգևոր և աշխարհիկ գործչի ու նրա խնկավետ վարքի հանդեպ, որն ամբողջացվել ու

⁷ «Բաղդասար Մետրապոլիտ Հասան-Ջալալեանցի Համառօպ կենսագրութիւն»-ը թեև գրականագիտության, հայագիտության կողմից օգտագործվել է որպես գիտական նյութ, բայց միմիայն հղումներ կատարելու կարգով: Առեմախոսության մեջ Մուրացանի երկը **ամբողջական վերլուծության** ու արժևորման ենթարկվում է **առաջին անգամ**:

վիպականացվել է հայ վարքագրության ժանրն հարստացնող Մուրացանի բարձրարժեք երկում :

«Բաղուասար Մետրապոլիտ Հասան Ջալալեանցի համառօտ կենսագրութիւն»-ն իր հերթին ազդարարում է մի այլ մշակութային, գրական հայրենավառ եռանդուն գործչի, ապագա անզուգական գրողի՝ Մուրացանի ոգեսլաց վերաբերմունքն իր մեծ ժամանակակցի հանդեպ՝ վարքագրական խնկամատյանի ստեղծմամբ:

Բաղդասար մետրոպոլիտի անպատմելի փորձություններով ու մաքառումներով լի ազգանվեր վարքն ու կերպավորումը լավագույնս է արարվել հեղինակի կողմից:

Աշխատանքի **երրորդ գլխի երկրորդ «Ռուզան կամ հայրենասեր օրհորդ» մասը «Ռուզան»** դրամայի քննությանն է նվիրված, որի սկզբնաղբյուրը XIII դարի մատենագիր-պատմիչ Կ. Գանձակեցու «Պատմութիւն հայոց» երկասիրությունն է: Նետողաց ազգի՝ մոնղոլ-թաթարների ավերիչ արշավանքների վիպականացմանը զուգահեռ, Մուրացանը, ժամանակաշրջանի պատմաքաղաքական հարցադրումների լույսի տակ՝ գեղարվեստական ամբողջացումներով, տիպական պարույրներով, մեկնաբանում է Խաչենի մելիքության բարոյահոգեբանական, հերոսական նկարագիրը, բացում Արցախին հասած ողբերգությունների մատյանը, կերտում պատմական և վիպական հերոսների փառահեղ մի շարք, արվեստակերտում Ռուզան հերոսուհու վարքաբանության գաղափարական կառույցը՝ անձնագրիության ողիսականը:

Մուրացանի «Ռուզան կամ հայրենասեր օրհորդ» դրամայի (գրական մեթոդի տեսանկյունից երկը հայտնվել է Տերտերյանի ուշադրության կենտրոնում) գրականագիտական վերլուծությունը մեթոդաբանության, գրական ուղղությունների (սիմվոլիզմ, կլասիցիզմ, ռոմանտիզմ) հարցում վերագնահատման շերտեր է պահանջում, ինչին և ուղղորդված է աշխատանքը:

Գրական, կրթական, հրատարակչական, հոգևոր, մշակութային կյանքի գեղարվեստական նկարագիրը, որով Մուրացանը փորձում է ընդգծել 1860-ականների լուսավորության գաղափարակիրների առաքելությունը՝ առաջադրելով իր գյուղափրկիչ ծրագիրը, գրողը ներկայացրել է **«խորհրդավոր միանձնուհի» վիպակում:**

Երրորդ գլխի վերջին՝ երրորդ «խորհրդավոր միանձնուհի» մասը, տիպական հետաքրքիր զարգացումներ է արձանագրում:

Մուրացանի «խորհրդավոր միանձնուհի» վիպակի գործողությունները կատարվում են Արցախում: Հիասքանչ բնությունն ու աշխարհագրական անկրկնելի լանդշաֆտը, **Շուշի քաղաքը (բնագրում՝ Շ.)** և այն ամենը, ինչ կազմավորում է երկի հիմնանյութը, արցախյան է:

Մուրացանը վիպականացրել է XIX դարի Հայոց Արցախի մշակութային, գրական կյանքը՝ արվեստակերտելով նրա նկարագիրը, հասարակական հարաբերություններից ծնվող նյութապաշտ բարքերը, դրա կողքին՝ 1860-ականների սերնդի լուսավորական-կրթական շարժումը, այն խոչընդոտող պահպանողական հոսանքը:

Երրորդ գլխի երրորդ՝ «Խորհրդավոր միանձնուհի» մասը, գաղափարական մեկնադաշտում հետաքրքիր զարգացումներ է արձանագրում:

«Խորհրդավոր միանձնուհու» գեղարվեստական հենքը կազմում է XIX դարի լուսավորական շարժման՝ 60-ականների անձնուրաց սերնդի առաքելությունը...

Միահյուսելով պատմականն ու գեղարվեստը, ներկայացնելով XIX դարի երկրորդ կեսի Արցախական աշխարհի նկարագիրը, Մուրացանը հատկանշում է Շուշիում սկսված լուսավորական շարժումը, որպես առաջավոր մշակութային երևույթ:

Կապիտալիստական հարաբերությունների զարգացումն ու լճացումը դրամապաշտության ժամանակներն է նախանշում, որտեղ բարոյական արժեքները անկում են ապրում:

Միակ, այս կամ այն չափով մաքուր միջավայրը՝ գյուղն ու գյուղացիությունն է, որը գտնվում է տգիտության, խավարի մեջ, որին օգնելու, նրա բարոյական մարմինը առողջացնելու, նրան լուսավորելու ծրագիր է առաջադրում Մուրացանը. մեկնել գյուղ՝ ժողովրդի մեջ, նրան սփոփելու, եղած ավանդները պահպանելու, բարոյապես կազդուրելու նպատակով:

Այս գործի հաջողության համար Մուրացանը կերպավորում է յուր գաղափարակիր հերոսներին՝ Գարեգինին և քույր-Աննային, որոնք XIX դարի լուսավորական շարժման՝ 60-ականների անձնուրացների սերնդակիցներն են, և որոնք ժողովրդին լուսավորելու համար զոհում են իրենց ունեցած ամենավեհագույնը՝ սրբազան ամուսնական սերը...

Գ Լ ՈՒ Խ Չ Ո Ր Ր Ո Ր Դ

ԱՐՑԱԽԸ XIX ԴԱՐԻ ՈՒՂԵԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ՄԱՍ I

ՄԵՍՐՈՊ ԹԱԴԻԱԴՅԱՆ, ԱՐՑԱԽՅԱՆ ԱՆԴՐԱԴԱՐՁՆԵՐ.

«ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆ Ի ՀԱՅՍ...»

Գիտական աշխատանքի **չորրորդ («Արցախը XIX դարի ուղեգրություններում») գլուխը** բաղկացած է **երեք (Մաս I. «Մեսրոպ Թադիադյան, արցախյան անդրադարձներ. «Ճանապարհորդութիւն ի**

Հայս», Մաս II. «Սարգիս արքեպիսկոպոս Ջալալյանց, «Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան». ուղեգրութիւնը՝ որպէս պետականութիւնը վերակերպելու ազգային ճանապարհ», Մաս III. «Հայկունի (Հովակիմ Գեղամյանց), «Ուղեգնացական ակնարկաներ»») մասերից: Երեք մասերում էլ առանձնադիտվում է ուղեգրության ժանրն իր հատկանիշներով, մեկնաբանում և հանգամանալից քննվում հեղինակների ներկայացրած գաղափարակարգը, տրվում Արցախի քաղաքական և վիպապատմական նկարագիրը:

Առաջին մասը նվիրված է **Մեսրոպ Թաղիադյանի «Ճանապարհորդութիւն ի Հայս»** գրքի Արցախին վերաբերող վիպապատմական երևույթների քննությանը: «Ճանապարհորդութիւն ի Հայս»-ը հետաքրքիր մեկնադաշտ է բացում, մշակութային, հասարակական, քաղաքական, հոգևոր կյանքի, բարոյահոգեբանական տարբեր շերտեր առաջադրում, խորը քննումներ և բացահայտումներ, մեկնաբանություններ ներկայացնում:

Շեղինակի՝ Մեսրոպ Թաղիադյանի քննության առանցքում Արցախ աշխարհն է յուր տոհմիկ հոգեբանությամբ, արցախցիների, հատկապես շուշեցիների հասարակական, մշակութային, տնտեսական, լուսավորչական և կրթական, հոգևոր կյանքի շերտերում կարևոր ու նշանակալի դեր խաղացած մելիքական տների ու առանձին մելիքների ծավալած ազգօգուտ, հայրենանվեր գործունեության մեկնաբանությամբ, նրանց տարաբնույթ առաքինությունների բացահայտմամբ, վիպական և պատմական հերոսների կերպավորմամբ, Արցախի բարդ ու հակասական քաղաքական կյանքի նկարագրությամբ:

Թաղիադյանը Հայաստանի աշխարհագրական, պատմական վայրերի, մշակութային կենտրոնների, աշխարհիկ և հոգևոր սրբավայրերի ու նրանց տեղագրության նկարագրությանը զուգահեռ ներկայացնում է նաև Արցախի ներքաղաքական, հասարակական ու հոգևոր կյանքը, մեկնաբանում ժամանակի մարդկանց տիպական հատկանիշները, առանձնանշում վիպական ու պատմական հերոսների կերպարներ, բնութագրում արցախցիների բնավորության առաքինի գծերը, բարոյական և գեղագիտական, հայրենապահական եզրույթները, արարչագործ էությունը, արարող ու հզորագոր, բայցև փխրուն հոգին, տեղեկություններ հաղորդում խորախորհուրդ բնության, աշխարհագրության, պատմության մասին, բառաբանում արցախցու վարք ու բարքից, մտաշխարհից, բացահայտում մելիքների նպատակասլաց, ազգօգուտ գործունեությունը, վերհանում ժամանակաշրջանի բարդ ու հակասական դիմագիծը՝ ամբողջացնելով Արցախի վիպապատմական, մշակութային, քաղաքական նկարագիրը:

ՄԱՍ II

ՍԱՐԳԻՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԶԱԼԱԼՅԱՆՑ, «ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆ Ի ՄԵԾՆ ՀԱՅԱՍՏԱՆ». ՈՒՂԵԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՏ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԿԵՐՏԵԼՈՒ ԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀ

Աշխատանքի **չորրորդ գլխի երկրորդ մասը** ներկայացնում է **Սարգիս արքեպիսկոպոս Զալայանցի «Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան»** երկի քննությունը:

Հոգևոր և մշակութային այս մեծ գործչի հսկայածավալ և բարձրարժեք **«Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան»** երկի առանցքներում ներկայացվում է նաև Հայոց Արցախի թեման:

Սարգիս արքեպիսկոպոս Զալայանցի հեղինակած սկզբնաղբյուրների ու պատմական, գրականագիտական, ազգագրական, գրական, քաղաքական, գեղագիտական խիստ կարևոր հանրագիտարանի արժեք ներկայացնող **«Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան» (հ.1-1842, հ. 2- 1858)** երկը, բավականին հարուստ, համապարփակ, ուսանելի նյութեր է պարունակում հայ ժողովրդի ու նրա մաս կազմող Արցախի մելիքությունների, մելիքական տների, հոգևոր և աշխարհիկ տերերի, աշխարհաշեն, հայրենանվեր հայրենակերտողների ու նրանց բեղուն գործունեության, արարչագործ էության ու քաջության, մենթալիտետի (մտախառնվածքի), գեղագիտական ընկալումների, մեծ ազատասիրության, ապա Արցախի պատմության, գրականության, աշխարհագրության, բանահյուսական երկերի, ավանդությունների, հասարակական, քաղաքական, հրատարակչական ու հոգևոր կյանքի և այլնի մասին: Հեղինակը վերակերտում և վերագծում է Հայոց պետականության ու նրա սահմանների երբեմնի ամբողջական նկարագիրը՝ լցված այն իրական տեսնելու անհերքելի հավատով:

«Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան» երկում, որում՝ որպես հայրենիքի բաղկացուցիչ մաս, վիպականացվել է նաև Արցախը աշխարհը, հայրենասեր հոգևորականը ամբողջացրել է ասելիքը, այն հասցրել խորը վիպականության, դրամատիզմի, մոր խնդրարկու ու սաստող ձայնի, հայրեղարծության ահեղ գոչի՝ որպես ազգի համախմբման մանիֆեստ, որպես ազգային նոր գաղափարակարգի բարձրակետ, **ինքնաճանաչության, հայրենաճանաչության, հայրենավերակերտման անասան ու հզորագոր ուխտ, զորակոչ:**

Այն մեզ հիշեցնում է Ա. Լաստիվերտցու Պատմության վշտահեծ նախաբանը՝ անմիաբան ու անառաքինի որդիների վարքի հետևանքով Հայրենիքին հասած դժբախտությունների վերջնագիր, որպես Հայաստան աշխարհի ողբերգականությամբ լի քաղաքական ճակատագրի նկարագիր:

Իսկ Ս. արքեպիսկոպոս Զալալյանցի մոտ՝ Մայր Հայաստանի վճռական ահեղագոչ Մայրագիր՝ կա՛մ վերակերտվելու անբեկանելի հայե՛նագոչ, կա՛մ թշվառությունների հատակ՝ մահը համբուրելու, իսպառ վերանալու անհայտագրով:

«Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան» երկում՝ Հայաստան աշխարհի նկարագրին զուգահեռ, հեղինակը հրաշակերտում է նաև ամենակույ ժամանակի երախին հայտնված, չար ու արյունարբու թշնամիներից հալածված, հոգևոր և աշխարհիկ առաքինություններով հանճարով պսակյալ Հայոց Արևելից կողմանք Արցախը, հերոսական, արարչագործ տերերից զրկված, փառքի փշուրներին հայտնված, բայցև դեռևս **ամուր ողնաշարով** կանգուն երկիրը, դեռևս պատմական, աշխարհագրական, ժողովրդագրական, տեղագրական տարածքներով խոսուն, հոգևոր արժեքներով հարուստ ու զարդարյալ, տաճարներով, պալատներով պսակյալ մի հնամենի երկիրը՝ իր ազնվաբարո վարք ու բարքով, արարչագործ, աստվածամերձ ժողովրդով հանդերձ...

ՄԱՍ III **ՀԱՅԿՈՒՆԻ (ՀՈՎԱԿԻՄ ԳԵՂԱՄՅԱՆՑ), «ՈՒՂԵԳՆԱՑԱԿԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ»**

Աշխատանքի **չորրորդ գլխի երրորդ՝ «Հայկունի (Հովակիմ Գեղամյանց), «Ուղեգնացական ակնարկներ»**», մասը նվիրված է Արցախի հասարակական, քաղաքական, ժողովրդագիտական, տեղագրական, պատմական, բանագիտական, գեղագիտական կյանքի լուսաբանմանը:

Ոչ միայն **վերագնահատման** ներկայացված XIX դարի **պատմիչ Ապրես Բեկնազարյանի «Գաղտնիք Ղարաբաղի»**-ի բազմաբնույթ հարցերում, այլև Արցախի մեղիքությունների քաղաքական, հասարակական, բարոյական, լուսավորական, կրթական, տեղագրական, բուսական աշխարհի նկարագրի պատկերման, մեղիքների արիական գծերի վերհանման, հերոսականության բացահայտման դիտակետից Հայկունու երկը բացառիկ արժեք է ներկայացնում: Աղվանից կաթողիկոսական տան քննման ու ներկայացման, հոգևոր և աշխարհիկ կյանքի, ժողովրդագրական փաստերի բացահայտման տեսանկյունից և XIX դարի գրականության, պատմության ու ժողովրդական բանահյուսության ներկայացուցիչներին առանձնադիտելու կողմերից Հայկունու «Ուղեգնացական ակնարկներ»-ն իր արժեքաբանական մեկնումներով՝ որպես գրապատմական, տեղագրական, քաղաքական, աղբյուրագիտական աղբյուր է ներկայանում:

Հայկունու «Ուղեգնացական ակնարկներ»-ն իր արժարժած հույժ կարևոր խնդիրներով, քաղաքական, մշակութային հարցադրումներով,

անշուշտ արցախցիների կենցաղավարության, ազգագրական, բանահյուսական հին նյութերի շտեմարան, արժեքավոր աղբյուր է հանդիսանում՝ բոլոր կողմերով քննվող ընդհանուր աշխատանքին՝ «Արցախը XIX դարի հայ գրականության մեջ» գիտական ուսումնասիրությանը, բերելով իր առյուծի բաժինը, առաջադրելով տարաբնույթ հարցադրումներ՝ ձեռք բերելով արդիական հնչեղություն, քաղաքական, հայրենագիտական, ուսուցողական մեծ նշանակություն, պատասխանելով արդի ժամանակաշրջանում ծառայած քաղաքական, էթնիկական, մշակութային և այլ տիպի հարցադրումների, հերքելով թշնամիների կողմից մանուկում հեղեղած բազմապիսի գիտական կոչված մարտահրավերները:

Գ Լ ՈՒ Խ Հ Ի Ն Գ Ե Ր ՈՐ Դ

ԱՐՑԱԽԸ XIX ԴԱՐԻ ՊԱՏՄԱԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԵՐԿԵՐՈՒՄ

ՄԱՍ I

ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ ԱՐՑԱԽՅԱՆ ԱՆԴՐԱԴԱՐՁՆԵՐԸ.

«ԱՐՑԱԽ» ԵՐԿԸ

Հինգերորդ գլուխն ունի հետևյալ «Արցախը XIX դարի պայմագեղարվեստական երկերում» վերտառությունը:

Այն ևս **երեք** մասերից է կազմված. **Մաս I.** «Ղևոնդ Ալիշանի արցախյան անդրադարձները. «Արցախ» երկը», **Մաս II.** «Մակար Բարխուդարյանի արցախապատումը», **Մաս III.** «Լեոյի արցախյան անդրադարձները. «Մելիքի աղջիկը» պատմավեպը»:

Ալիշանի երկի քննատարածքն ու գաղափարանյութը Արցախի հնադարյան պատմությունն է, ապա մելիքական տների, մելիքների խիզախումների, աշխարհաշեն գործունեության, մաքառումների, հերոսապատումների, արցախահայության գեղարվեստական, պատմական նկարագիրը, առանձնապես նրա պատմաաշխարհագրական, հոգևոր, գեղարվեստական, տեղագրական, ազգագրական առանցքների, բնական-բուսական հարստությունների, հանքավայրերի լուսաբանումը:

Վիպականացված են Հայոց Արևելից Կողմանց՝ Արցախի 13 նահանգներն իրենց բնորոշ գծերով, գավառներն՝ իրենց հոգևոր և աշխարհիկ կենտրոններով, մշակույթով, պատմաաշխարհագրական դիրքով:

Անձնավորված, գեղեցիկ հատկություններով բնորոշված են Արցախի լեռները, լեռնահովիտները, լեռնաշղթաները, գետերն՝ իրենց վտակներով, բնակավայրերը, քաղաքները, ավանները, գյուղերը՝ իրենց հին ու նոր

անվանումներով, եկեղեցական համալիրները, հոգևոր կենտրոնները, աշխարհագրական, պատմական, մշակութային լանդշաֆտը:

Ալիշանի «Արցախ» գրքում, Արցախի քաղաքական ճակատագրին զուգահեռ ներկայացված են աշխարհիկ և հոգևոր գործիչները, տրված նրանց վարքն ու բարքը, քննված կատարած գործերը, մեկնաբանված են աշխարհաշեն ծրագրերը, վարած ներքին և արտաքին կոիվները, ընդգծված արքաների, իշխանների աշխարհաշեն նպատակները, մշակութային ծրագրերը, կառուցողական ինքնատիպ դրսևորումները:

Հարևան երկրների քաղաքական, ծավալապաշտական նկարագրին զուգահեռ ներկայացված է կերպարների համակարգը, արցախահայության մաքառումներով լի անցած ուղին, թշնամյաց ոտնձգություններն ու երկրին հասցրած ավերվածությունները, թշնամիների դեմ՝ հայրենիքի փրկության համար պայքարի ելած հերոսական ու կորովի մելիքների գործունեության լայն շրջանակները:

Բացահայտված են նաև Արցախի պատմաաշխարհագրական լանդշաֆտը, բնական հանածոները, հանքավայրերը և այլն: Տիպական արտահայտչամիջոցներով անձնավորված է բնությունն իր գարմանահրաշ նկարագրով՝ որպես այրուձի ու սնուցող մայր, սատար կանգնած իր ժողովրդին՝ նրա մաքառումներով ու հերոսականությամբ լի ճանապարհին:

Գեղարվեստական արժանիքներով հանդերձ, Ղևոնդ Ալիշանի «Արցախ»-ն իմացությունների լայն շրջանակ ունի, արդիական հնչեղություն, ճանաչողական-դաստիարակչական մեծ նշանակություն, իսկ տարածքն ուսումնասիրող գրականագետների, պատմաբանների, ուսանողության համար՝ անփոխարինելի գիտական արժեք:

ՄԱՍ II

ՄԱԿԱՐ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆԻ ԱՐՑԱԽԱՊԱՏՈՒՄԸ

Հինգերորդ գլխի երկրորդ մասը «Մակար Բարխուդարյանի արցախապատումի» քննությունն է՝ ներկայացված «Արցախ» մեծարժեք գրքով, բացահայտված Արցախ աշխարհի բազմաշերտ նկարագրով:

Ալքենախոսության հինգերորդ գլխի երկրորդ մասը ներկայացնում է Մ. Բարխուդարյանի՝ Արցախի գրականությանը, հնագիտությանն ու աշխարհագրությանը, տեղագրությանը, պատմությանը, հասարակական կյանքին վերաբերող պատմագրական երկերը, մանավանդ «Արցախ» արժեքավոր երկը, որի համակողմանի քննությանն անդրադարձել ենք՝ ընդգծելով և բերելով փաստեր ու տեղեկություններ՝ գիտական մոտեցմամբ բացահայտելով անվանի գործչի անուրանալի և բարձր վաստակը արցախագիտության և Արցախի գրականության մեջ:

Ուսումնասիրությունը ճանապարհորդական գրառումների մի հետաքրքիր հավաքածու է: Այն հեղինակը հյուսել է Արցախում կատարած երկարատև ճանապարհորդությունների արդյունքում: Մանրամասնորեն են ներկայացված Արցախի գյուղերն ու քաղաքները, աշխարհիկ և հոգևոր շինությունները, չնաշխարհիկ բնությունը, գրական, աշխարհագրական ու պատմական լանդշաֆտի ճիշտ պատկերը: Մ. Բարխուդարյանը ցավով է փաստում հայրենակիցների կողմից ցուցաբերած անհոգ ու անտարբեր վարքը Արցախի հնությունների հանդեպ, նշելով, թե մեր նախնիները ինչ են ավանդել սերունդներին, թե «չգիտենք թե պատմական փշրանաց ինչ յիշատակարաններ կան թաքնուած մեզ շրջապատող լեռների, ձորերի եւ դաշտերի մէջ. չգիտենք թե ազգային անցեալ պատմութեան մութ կէտերը լուսաբանող ինչ արձանագրութիւններ խաչարձանների եւ տապանաքարերի վերայ եւ մագաղաթեայ գրչագիրների յիշատակարաններում»⁸:

Քննելով Արցախ աշխարհի աշխարհագրական և պատմական տեղանվան հարցը՝ Բարխուդարյանը, աղբյուր ունենալով Խորենացու պատմությունը, նշում է փաստական նյութի կարևորությունը՝ իր նպատակադրումը շեշտելով. «Այս նահանգն զանազան դարերում փոփոխութիւններ կրելով Հայերից կոչուած է **Գ ա ռ գ ա ռ, Արցախ, Փոքր Սինիք, Խաչենք, Սեաւ Այգի, Խակ Պարսիկներց և Տաճիկներից Ղարաբաղ**»⁹:

Մ. Բարխուդարյանի գրքի շարադրանքում մի քիչ չորություն է զգացվում, բայց դա առաջին հայացքից: Ուշադիր ընթերցման, քննման ու հայեցման դեպքում մեր առջև բացվում է անկրկնելի, հրաշագեղ, հարուստ պատմությամբ, ավանդույթներով, բարքերով, գրական, մշակութային ազգագրական, պատմական արժեքներով, հոգևոր և աշխարհիկ առաքինություններով պսակված աստվածահաճո, բիբլիական մի աշխարհ, որի անունն **Արցախ** է, մարդկային բնության հրաշքների թագ ու պսակ հանդիսացող խորհրդով, ազատության և քաջագործությունների մղվող արցախահայության անուրանալի, հզորազոր հատկություններով:

Մ. Բարխուդարյանի «Արցախ» աշխատությունը XIX դարի Արցախի մշակույթի, գրական անդրադարձների, պատմության, տեղագրության, հոգևոր արարումների, աշխարհագրության վերաբերյալ անփոխարինելի վավերագիր է և ունի բացառիկ գիտական արժեք:

⁸ Բարխուդարյանց Մ., Արցախ, էջ Ա :

⁹ Նույն տեղում, էջ 2:

ՄԱՍ III
ԼԵՈՅԻ ԱՐՑԱԽՅԱՆ ԱՆԴՐԱԴԱՐՁՆԵՐԸ. «ՄԵԼԻՔԻ ԱՂՋԻԿԸ»
ՊԱՏՄԱՎԵՊԸ

Աշխատանքի հինգերորդ գլխի երրորդ մասն ունի «Լեռնի արցախյան անդրադարձները. «Մելիքի աղջիկը» պատմավեպը» վերնագիրը:

Լեռնի «Մելիքի աղջիկը» պատմավեպի նյութը քաղված է XVII դարավերջում և XVIII դարի առաջին քառորդում Արցախի Վարանդայի մելիքությունում տեղի ունեցած պատմաքաղաքական իրադարձություններից: Ավանդավեպն իր արծարծած հիմնախնդիրներով, գեղարվեստական առանձնահատկություններով, առաջադրած ազգային հզոր գաղափարակառույցով, գեղարվեստի և պատմության փիլիսոփայության բացահայտմամբ, օսմանցիների դեմ կռած աներևակայելի հաղթանակով, ժողովրդի դերի խտացմամբ բացառիկ արժեք է ներկայացնում XIX դարի հայ գրականության պատմության ընդհանուր համապատկերում:

«Մելիքի աղջիկը» վիպական տարրերով, ավանդույթակիր շերտերով հյուսված, գեղարվեստորեն հագեցած պատմական ամուր ողնաշար ունեցող երկ է, գեղարվեստական արժանիքներով հարուստ գաղափարարակարգ ներկայացնող ստեղծագործություն, որը Լեռնի գրականության հաղթանակն է, գեղարվեստի և պատմության փիլիսոփայության առանձնադիտված հիմնախնդիրը:

Պատմավիպասանի ընդհանրացումներից կարևորագույնը երկում **ժողովրդի նկարագրի ու բացառիկ դերի գերազանահատումն է, հզոր, առաջնուղիչ ուժի մեկնումը:** Ժողովրդի դերի կարևորման հարցադրմամբ առաջնորդվելով, համամիտ լինելով Րաֆֆու հերքումներին ու հաստատումներին, թե հայոց պատմության մեջ չի նշմարվում ցածր դասը՝ ժողովուրդը, Լեոն, ինչպես մնացած, «Մելիքի աղջիկը» երկում ևս, բարձր է գնահատում ժողովրդի մղումները՝ երկիրը շենացնելու և ազատ, անկախ, հաղթական պահելու տեսանկյունից, հաստատելով այն եզրահանգումը, որ ժողովուրդն է հայրենի օջախը շենացնողը, թշնամու դեմ բարձրացող հատու գեները: Ժողովուրդն է հայրենի ավանդույթների կրողը, ազգի անվեհեր ու անպարտ ոգին, բայց որը հաճախ անտեսվում է աշխարհիկ ու հոգևոր տերերից, հազար ու մի հարվածների, պղծության ենթարկվում ներքին ու արտաքին թշնամիներից:

Երրորդ մասը ներկայացնող **«Մելիքի աղջիկը»** պատմավեպում Լեոն քննողաբար փաստագրել է Մելիք-Շահնազարյան մելիք Հուսեֆի անսպասելի մահվանից հետո օսմանցիների վայրագ երեսից անհուսալի վիճակի մեջ հայտնված, հպատակության, արյան և պղծության, ավերի, կոտորածների ենթարկված երբեմնի շեն ու անհաղթ երկրի ներքին,

խախտու կյանքը, ապա վարպետությամբ գեղարվեստականացրել թշնամու դեմ 1733 թ. գարնանագալին՝ մի գիշերվա մեջ, մելիքանիստ Ավետարանոց կենտրոնով վարանդացիների բարձրացրած ապստամբական դրոշը և կոած աներևակայելի հաղթանակը:

«Մելիքի աղջիկը» պատմավեպը հարուստ է քաղաքական դիտարկումներով, գեղարվեստի անկրկնելի անցումներով, սկզբունքային հարցադրումներով, ազգային գաղափարակառուցից բխող մեկնաբանություններով և ընդհանրացումներով, ժողովրդի դերի գնահատմամբ, ազատագրական պայքարի ու անագորույն թշնամու դեմ հաղթանակի հասնելու նպատակալացությամբ: Փաստագրենք դրանց գաղափարադաշտի մանրակերտն իրենց կապող պարույրներով և առանձնադիտումներով.

հայ և համաշխարհային գրականության մեջ նոր տիպի հերոսի (Մելիք-Շահնագարյան մելիք Հուսեինի դուստր Գայանե, ժողովրդի մարդ՝ Մելիքենց Մանաս) կերպավորում, հանձինս Լեոյի «Մելիքի աղջիկը» երկի հերոսների,

նոր տեսակ կռվի ի հայտ գալը.

ոգու պայքարի փիլիսոփայություն (արցախցիները, մասնավորապես՝ վարանդացիներն որպես այդ ազգային անհաղթահարելի արժեքի կրողներ),

կռվի փիլիսոփայություն (մելիքադուստր Գայանե. հայրենի հերոսական ավանդույթների, աստվածային շնորհների կրող, ով իր նպատակաուղղվածությամբ, ռազմական գյուտով, ծրագրայնությամբ, հասունացած աշխարհընկալմամբ՝ հայրենի ավանդների, ճշմարիտ հավատի ու հայրենիքի անկախությունը պահպանելու տեսանկյունից, հայ գրականության նոր տիպի հերոսի մարմնավորումն է և **նոր տիպի կռվի՝ եկեղեցու կռվի, նոր տիպի կռվողների փիլիսոփայությամբ**, արվեստաբանի արարող ոգով ու վրձնով, իմաստասիրական խոսքով, մտախառնվածքով ու հոգեկերտվածքով գերազանցում է հայ և համաշխարհային գրականության լավագույն հերոսուհիներից շատերին՝ դառնալով առանձնադիտվող գրական երևույթ, հերոս, նոր տեսակի եզակի կերպավորում),

կռվի եկեղեցու փիլիսոփայություն (մելիքադուստր ազատատենչ Գայանե),

կռվողների փիլիսոփայություն (Մելիք-Շահնագարյան մելիք Հուսեինի տիկնոջ՝ Աննա խաթունի և նախնիների հզոր ոգիներից ու ժողովրդի մարդու՝ Մանասի դասերից հասունացած, ինքնագիտակցված, բարձր շնորհներով զարդարված, իր տեսակի մեջ անզուգական հերոսի՝ Գայանեի գլխավորությամբ գործող Վարանդայի կանայք. օսմանցիներից պղծվածների և պղծվելուն ենթակա հարս ու աղջիկների, մայրերի հոգեբանորեն հասունացած բախման արյունալի կետ. բախում՝ իրենց

պղծողների՝ օսմանցիների հետ, բարոյահոգեբանական տրամվա և վրեժի ու հաղթության համանշանի (սինդրոմի) առկայություն, և վերջապես՝ պղծվածների աննահանջ հաղթանակ),

մանր կռվիվների փիլիսոփայություն (անվերապահորեն սեփական ուժերին վստահելու և օսմանցիների ահարկու մարմնից տզուրկի նման արյուն հանելու և ոչնչացնելու փիլիսոփայությամբ գործող ժողովրդի՝ ծմակի մարդու՝ Մելիքենց Մանասի գլխավորությամբ և նրա հանդուհունգն ծրագրով թշնամու դեմ աննահանջ մղվող, խիզախ ու հավատարիմ գժերի տուկալի կռիվները՝ մեկը տասի, հարյուրի դեմ հարաբերակցությամբ),

մելիք Ավանի գլխավորությամբ վարանդացիների մղած նոր տեսակ՝ միաբան կռվի ստրատեգիա և տակտիկա. իշխանական դաս (Մելիք-Շահնազարյան մելիք Հուսեինի և իր հզոր նախորդների ոգեկոչված հիշատակներ, Արցախի գահերեց իշխան Դիզակի մելիք Ավան (Եգան), Ասլան, Ջրաբերդի մելիք Հաթամ),

թշնամու դեմ հայ ժողովրդի, մասնավորապես վարանդացիների կնքած նոր տեսակ միասնական, միաբան ուխտի ու աննախադեպ հաղթանակի հասնելու փիլիսոփայություն,

հոգևոր և աշխարհիկ դասի երերումներ. ներհակ առճակատումների բացահայտումներ (Ավետարանոցի մայրապետի՝ կույս Հեղինեի հոգևոր սայթաքումներ),

նոր տեսակ հերոսների՝ ցածր խավի մարդկանց (**Փերի, Նազու, Մեհրի, Մանաս**) կերպարաստեղծ համակարգի մեկնություն,

հայ ժողովրդի, նրա մի հատվածի՝ վարանդացիների ազգային կենսաբանական տրվածքի՝ ազատության ու ազատասիրության փիլիսոփայության վերակերտում:

Այսպիսով՝ թվարկած գեղարվեստական արժանիքներով ծանրաբեռ, «Մելիքի աղջիկը» այսօրվա քաղաքական դաշտում իր ներկայացրած գեղարվեստի ու պատմության դասերով ձեռք է բերում արդիական բարձր հնչեղություն, ցույց տալիս անձնուրացության, քաղաքական բարձր գիտակցության, հայրենապահության սքանչելի ու օրինակելի դրսևորումներ, հայրենիքի ազատությունը աննահանջ կռվով կռելու, սեփական ուժերին վստահելու, միաբանվելու ազգային փիլիսոփայություն:

«Մելիքի աղջիկը» պատմավեպն իր առաջադրած ազգային գաղափարակարգով քաղաքական մի այցեքարտ է, գեղարվեստի ունիկալ նմուշ, ազգային նպատակադիր մի ծրագիր՝ ուղղված սերունդներին, հայոց բոլոր ժամանակներին, հայ ժողովրդի պայքարը, հաղթություններն առաջնորդող համահայկական **ազգային մի գերխնդիր**, ազատ, ինքնիշխան, հաղթական Հայաստան կերտելու **մի գերնպատակ**:

Այն գիտական, քաղաքական, պատմական, գաղափարաբանական, հայրենասպահության ու պայքարի, հայրենասիրական մեծ նշանակությամբ արարված գեղարվեստական ու պատմական բարձրարժեք երկ է:

Գ Լ ՈՒ Խ Վ Ե Ց Ե Ր Ո Ր Դ

ԱՐՑԱԽԸ ԲԱՆԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՆՅՈՒԹԻ ԳՐԱԿԱՆ ՄՇԱԿՄԱՆ ՄԵՋ

ԿՈՍՏԱՆԴԻՆ ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ (ՏՄԲԼԱԶԻ ԽԱԶԱՆ).

ԱՐՑԱԽՑԻՆԵՐԻ ԿՅԱՆՔԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ

«ՋՈՒՆԱ-ՏՄԲԼԱ» (Ա, Բ) ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐՈՒՄ

Ատենախոսության **վեցերորդ** գլուխն ունի **«Արցախը բանահյուսական նյութի գրական մշակման մեջ. Կոստանդին Մելիք-Շահնազարյան (Տմբլաչի Խաչան). Արցախցիների կյանքի գեղարվեստական պատկերը «Ջունա-Տմբլա» (Ա, Բ) ժողովածուներում»** վերնագիրը:

Գիտական աշխատանքի վերջին գլուխը նվիրված է XIX դարավերջի և XX դարասկզբի արևելահայ երգիծաբանության թերևս ամենամեծ ներկայացուցչի՝ Կ. Մելիք-Շահնազարյանի կյանքի և ստեղծագործության որոշ դրվագների, ակտիվ գրական, հասարակագիտական, քաղաքական, թարգմանական, Արցախի բարբառագիտության, հրատարակչական, մանկավարժական, ժողովրդագիտական, պատմամշակութաբանական գործունեության քննությանն ու գնահատմանը: Վերլուծության է ենթարկված երգիծաբանի **«Ջունա-Տմբլա» (Ա, Բ)** ժողովածուների գաղափարական առանցքը և կերպարների համակարգը, տիպաբանական առանձնացումները: Առանձնադիտված են արցախցու, Արցախի, Շուշիի ֆենոմենալ նկարագրերը, բացահայտված՝ քաղաքական ճակատագիրը:

Կ. Մելիք-Շահնազարյանը, որն իր գրական հերոսի անունով կոչվել է Տմբլաչի Խաչան, լինելով լայն հետաքրքրությունների տեր, նշանավոր մտավորական, գրող, մանկագիր, բանագետ, թարգմանիչ, իր գեղարվեստական երկերում-ֆելիետոններում ներկայացրել է XIX դարի 80-90-ական թթ. արցախահայության հասարակական-քաղաքական, սոցիալ-կենցաղային հարաբերությունների գեղարվեստական նկարագիրը, այսպիսով նշանակալից ներդրում ունեցել ժողովրդագիտության զարգացման գործում...

XIX դարի գրական արցախասպատումը հայտնագործեց յուրօրինակ մի երկրամաս՝ բնաշխարհիկ ավանդույթներով, զարմանահրաշ բնությամբ, ժողովրդի ավանդական ամուր կազմվածքով ու բազմերանգ կենցաղավարությամբ: Ֆիզիկական Արցախի հայտնության հետ մեկտեղ, գրականություն թափանցեց նաև հայոց արցախականի հոգևոր աշխարհը՝

բանաստեղծական ու բարոյական արժեքներ հայտնաբերելով էթնիկական կերտվածքի բանահյուսական ավանդություններում, պատմական ասքերում:

XIX դարավերջի Արցախի գրականության հարուստ ֆոնի վրա վեր է խոյանում արդարամիտ և ճշմարտախոս Տմբլաչի Խաչանի կերպարը, ով իրավամբ դառնում է Կ. Մելիք-Շահնազարյանի խոսասփող-տիպը՝ որպես անարդարությունն ու քաղաքական որոգայթները խարազանող գրող:

Գրական հայերենի, գրաբարի, ռուսերենի, ֆրանսերենի հիանալի գիտակ Կ. Մելիք-Շահնազարյանն իր երկերի լեզուն դարձնում է Արցախի հարուստ բարբառը: «Ջուռնա-Տմբլա» ժողովածուն, նվիրելով իր պատվական ազգին՝ նշում է. «Իմ աչքի յույս դարաբաղցոց, մեծին ու պուճուրին փեշքեշ»¹⁰, ապա մեծարանքով շարունակում. «Էլ օզըմ չըմ ըրգընցնիմ, իմ աչքի լյուս ըշխարքավըս մին փոված նամուս ղեյրաթավ դարաբաղցիք, իմ հույսը ծեզ երա ա, ծեր աբուռը օլմիա թա չուը քցիք, դուդի բուդի պեներու հետա կենաք, ծեր վյաթանը մուռանաք, ծեր վառ ուջախին երա ճյուր ածիք, Ղարաբաղին անումը կոտրիք...»¹¹:

«Ջուռնա-Տմբլա» ժողովածուի մեջ գետեղված ֆելիետոններն ունեն սոցիալ-քաղաքական, ընտանեկան-կենցաղային և այլ ուղղվածություն:

Երկու երկերի գաղափարակիր հերոսները, այսպիսով, հեղինակներն են՝ հայտնված հայ մարդու համար բարդ ու հակասական ժամանակների (մոայլ միջնադար, XIX դար) առանցքներում, որոնք հանդես գալով մարդու ու մարդկայինի խաթարված ու անխաթար որակների շուրջ, կատարված մեղքերի ու մեղավորների շրջապտոյտներում փնտրելով մարդկայինի անքննելի գծերը՝ բացում են ժամանակաշրջանի աղավաղված դիմագիծը:

Կ. Մելիք-Շահնազարյանի՝ Տմբլաչի Խաչանի ֆելիետոններում պատկերված է արցախցիների բնականոն, սոցիալական, բարոյական, գրական, գեղագիտական, քաղաքական, իրավական, կենցաղային, տնտեսական կյանքը:

Երգիծաբանի ֆելիետոններում, տիպական գծերով գեղարվեստականացված է Շուշիի բազմակողմանի նկարագիրը, բացահայտված նշանավոր «Թոփխանա» հրապարակը:

¹⁰ Տմբլաչի Խաչան, Ջուռնա-Տմբլա, գ. Ա, Վաղարշապատ, 1907 (այսուհետև՝ Ջուռնա-Տմբլա, գ. Ա), Առաջաբան:

¹¹ Տմբլաչի Խաչան, Ջուռնա-Տմբլա, գ. Բ, Վաղարշապատ, 1908 (այսուհետև՝ Ջուռնա-Տմբլա, գ. Բ), էջ 241:

Ե Ձ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

1. Ուսումնասիրության վեց գլուխներում առանձնադիտված հեղինակների երկերը (Պլատոն **Չուբով**. «Ղարաբաղի աստղագետը», **Րաֆֆի**. «Խամսայի մելիքությունները», Ապրես **Բեկնազարյան**. «Գաղտնիք Ղարաբաղի», **Րաֆֆի**. «Գաղտնիք Ղարաբաղի», **Լեո**. «Վէ՛պ թէ՛ պատմութիւն», Մակար Վ. **Բարխուտարեան**. «Քննադատութիւն քննադատութեանց», Հայկունի (Հ. Գեղամյանց). «Ուղեգնացական ակնարկներ», Գրիգոր Տէր Յովհաննիսեան (Մուրացան). «Բաղտասար Մետրապօլիտ Հասան Ջալալեանցի համառօտ կենսագրութիւն», Մուրացան. «Ռուզան կամ հայրենասեր օրհորդ», «Խորհրդավոր միանձնուհի», Մեսրոպ Թաղիադյան, «Ճանապարհորդություն ի Հայաստան», Սարգիս արքեպիսկոպոս **Ջալալյանց**. «Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան», Հայկունի (Հովակիմ Գեղամյանց), «Ուղեգնացական ակնարկներ», Ղևոնդ Ալիշան, «Արցախ», Մակար **Բարխուդարյան**, «Արցախ», **Լեո**, «Մելիքի աղջիկը», Կոստանդին Մելիք-Շահնազարյան (Տմբլաչի **Խաչան**), «**Ջուռնա-Տմբլա**») ներկայացվում **գրականագիտական և մեթոդաբանական** համակողմանի քննության, այն դիտարկելով որպես ատենախոսության գլխավոր խնդիրներից մեկը, միաժամանակ կարևորելով այն հանգամանքը, որ վերոդիտված հեղինակների երկերում (թե՛ գեղարվեստական, թե՛ քննադատական, թե՛ վիպապատմական) XIX դարի հայ գրականության ընդհանուր ֆոնի վրա տեսականորեն-քննադատորեն տրվում է Արցախի գեղարվեստական և պատմական հզոր նկարագիրը:

2. Ատենախոսության մեջ՝ որպես գիտական **առաջադրույթ**, ներկայացված են Արցախի վերաբերյալ հրապարակումները XIX դարի հայ գրականության մեջ և արժևորված այն գեղարվեստական և պատմական նշանակությամբ, քանի որ ատենախոսության մեջ քննության տրված գրքերը, խիստ պատմական լինելով հանդերձ վիպական են և հակառակը՝ խիստ վիպական լինելով հանդերձ՝ պատմական: Ընդհանրության մեջ, դա XIX դարի Արցախ աշխարհի, մելիքության ժամանակների պատմությունն է, արցախահայության, մելիքների հասարակական, բարոյական, իրավական, գեղարվեստական, պատմական, տոհմիկ նկարագիրը՝ բեկված բարդ ու հակասական ժամանակաշրջանի մեջ, ժամանակի հայ մարդն ու Հայաստան աշխարհն իր կորուստներով, հերոսականությամբ, ազատասիրական պայքարով, մաքառումներով, ինքնիշխանության կորուստով, դրամատիկ ճակատագրով: Այս տեսակետից առանձին բաժին է հատկացված Պլատոն Չուբովի «Ղարաբաղի աստղագետը» վեպին ոչ միայն այն հանգամանքով, որ դա **առաջին** վեպն է Ղարաբաղի մասին,

առաջին **գեղարվեստապատմական** վավերագիրը, այլև դեպքերի նկարագրության **ճանաչողական, դաստիարակչական և գեղագիտական** նշանակությամբ:

3. Պլատոն Զուբովի «Ղարաբաղի աստղագետը» պատմավեպը հայտնություն էր հայ գրականության ընդհանուր համապատկերում, իսկ գրողի հետաքրքրությունը Արցախի մելիքությունների, հայոց արցախահայության վարքաբույր առաքինությունների հանդեպ, նրա արարչագործ էության, հոգևոր հարուստ ժառանգություն ստեղծած մղումների, զարմանահրաշ մտախառնվածքի, ազատասեր ու քաջարի ոգու հանդեպ, հերոսական նկարագրի, հաճախ ունեցած քաղաքական կորուստների, սայթաքումների հանդեպ, Արցախի հնաբույր, հնատարազ պատմության հանդեպ՝ անառակելի փաստ, անաչառ ու տաղանդաշատ ստեղծագործողի քաղաքացիական ազնիվ ու աներեր պահվածքի վառ օրինակ, որը մշակույթ ունեցող և մշակույթ արարող, մշակույթ գնահատող ժողովուրդների համար դառնում է ուսանելի հատկանիշ՝ բոլոր իր սուր հարցադրումներով:

4. XIX դարասկզբին օտարերկրյա հետազոտողների ուշադրության կենտրոնում հայտնված Հայաստանը, մասնավորապես նրա անխախտելի մաս կազմող Արցախը, պատճառ հանդիսացավ հայի ու Հայաստանի մասին գեղարվեստական, պատմական և այլ տեսակի երկերի հրատարակվելուն, որի վառ ապացույցներից է «**Ղարաբաղի աստղագետը**»:

Արցախի գեղարվեստական նկարագիրն առաջին անգամ կերպավորված ենք տեսնում XVIII դարավերջի և XIX դարասկզբի ռուս գրականության ներկայացուցիչ, գրող Պլատոն Զուբովի «Արդրկովկասյան պատմական վեպ» կամ «Ղարաբաղի աստղագետը» երկում:

Երկի կարևոր ձեռքբերումներից է հեղինակի տիպաբանական երանգներով ստեղծած պատմական և վիպական կերպարների, սյուժեի համակարգի, Հայոց Արցախի քաղաքական, պատմական, էթնիկ, բարոյական նկարագրի ստեղծումը:

«Ղարաբաղի աստղագետում» դեպքերի ու իրադարձությունների ներքին անցումները կատարվում են աստղագետի գուշակություններով, որոնք պատումը երանգավորում են ռոմանտիկ-արկածային լուծումներով: Քաղաքական դրդապատճառները որոշիչ են դառնում մելիքությունների ինքնակառավարման համակարգում: Մեծ տերություններն ունեն իրենց որդեգրած մեծ քաղաքականությունը, որը կործանարար է փոքրամասնությունների, տվյալ դեպքում՝ հայերի համար, որքան էլ վերջիններս հավատարիմ լինեն իրենց պարտականություններում,

նվիրվածություններում, հերոսական վարքով կա՛մ առ Ռուսաստան, կա՛մ առ Պարսկաստան:

Հայոց Արցախի այսօրվա քաղաքական դրամատիզմով լցված ճակատագիրը և նրա ավազակաբարո թշնամիները նույնն են, ինչպես XIX դարում... Պարզապես պետք է դասեր քաղել անցյալի սայթաքումներից ու ազգովի միաբանվել, համառորեն պայքարել հետագա ազատաբեր ժամանակների համար:

Արդի ժամանակաշրջանի Արցախի քաղաքական դաշտում Պլատոն Զուբովի «Ղարաբաղի աստղագէտը» ձեռք է բերում խիստ արդիական հնչեղություն և դաստիարակչական նշանակություն՝ իր բոլոր ուսանելի կողմերով:

5. Արցախի հայտնության տեսակետից բացառիկ արժեք է ներկայացնում Րաֆֆու «Խամսայի մելիքությունները» երկը:

Հանգամանորեն ներկայացնելով մելիքությունների աշխարհագրական տեղայնությունն ու իշխանական կառուցվածքը, մելիքների գեղարվեստական ու պատմական կերպավորումը՝ Րաֆֆին դեպի Հայաստանի տարբեր սրբավայրեր, պատմական տարածքներ ձեռնարկած ճանապարհորդությունների արդյունքում ձեռք բերած բազմաբնույթ վավերագրերի, պատմական, վիպական, բանահյուսական առատ նյութի օգնությամբ ստեղծում է իր ստեղծագործության պսակ հանդիսացող «Խամսայի մելիքությունները» գիրքը:

Ահավասիկ. անցյալում ունեցել ենք պետական կարգ հիշեցնող մելիքությունների իշխանություն, որի տարբեր կառույցների վերաբերյալ տարբեր վայրերում դեռևս պահպանված պատմական, վիպական, հոգևոր բնույթ կրող հավաստի վավերագրերը պետք է հավաքել, կորստից փրկել: Այդ ծանր, ազգանվեր առաքելությունը իրագործված ենք տեսնում համառ ու նախանձախնդիր գրողի տքնանքի և խիզախման շնորհիվ, որի արդյունքում իրականացված ենք տեսնում Րաֆֆու կողմից Արցախի մելիքությունների մասին ընդհանրական պատմության ստեղծումը, որը ամփոփվել է գիտական ամուր ողնաշար ունեցող «Խամսայի մելիքությունները» երկում:

6. Րաֆֆին տիպականացնում է Արցախի հոգևոր և աշխարհիկ առաջնորդների խիզախումներն ու սայթաքումները, ընդգծում միաբան և անմիաբան մելիքների կերպարները, կերպավորում Արցախում իրենց անօրեն կերպով խան հռչակած թշնամի տարրերը, տալիս նրանց ժանտ ու խարդախ նկարագրերը, որոնց հաջողվել է օգտվել մելիքների անհամաձայնություններից, մանր-մունր, հաճախ արյունալի կռիվներից ու ժամանակավոր տիրապետող դառնալ Արցախում՝ քրքրելով վերջինիս ֆիզիկական, բարոյական, հոգևոր մարմինը:

«Խամսայի մելիքությունները» երկում ընդգծված ենք տեսնում Րաֆֆու տաղանդի հզոր ուժն ու ազգային վարքամատյան արարելու աներեր կամքը, որդեգրած ծրագրերի բարձր մակարդակն ու իր կողմից առաջադրված խնդիրներին ընդհառաջ գնալու եռանդը, դժվարություններից չերկնչելու անվախ բնույթն ու մենթալիտետի հզոր թափը, ազատասեր ու ազգապահպան մտասևեռումները, որոնց հանրագումարը՝ եզրահանգում ենք՝ «Խամսայի մելիքություններն» են և նրա պատմական թեմայով գրված մնացած երկերը:

«Խամսայի մելիքությունները» երկում վառ կերպով է տրված ազգային գաղափարակարգին ու ազգային ավանդներին հավատարիմ մելիքների, հոգևոր առաջնորդների նկարագրերը, նրանց ծավալած դժվարագնա գործունեությունը և վրդովմունքով՝ անմիաբան մելիքների, հոգևոր այրերի ցուցաբերած վտանգներով լի վարքը, ունեցած դերը ազգային գաղափարակառույցի և ինքնիշխանության, հավատի պահպանման կամ վերջիններիս դեպքում՝ կործանման գործում:

Հայ-ռուսական, հայ-պարսկական, հայ-թուրքական հարաբերությունների կիզակետում Արցախի մելիքների դիվանագիտական, ռազմական առնչությունները, ազգային-ազատագրական պայքարի դրվագներն են դիտարկված Րաֆֆու գրքում, գեղարվեստական պատկերավորությամբ քննված Արցախի հասարակական, քաղաքական, մշակութային կյանքը:

«Խամսայի մելիքությունները» երկում կարևոր առանցքում է տրված մելիքական տների ծագումնաբանությունը, նրանց պատմական, աշխարհագրական տեղայնությունը և այլն:

7. Հայ գրականության բարձրարժեք էջերից մեկի՝ 135 տարի մերժումի ենթարկված Ա. «Գաղտնիք Ղարաբաղի»-ի քննությունը բազմաշերտ ծալքեր է բացում:

Եկանք հետևյալ եզրահանգման.

«Գաղտնիք Ղարաբաղի» գրքի հեղինակը Ապրես Բեկնազարյանն է,

«Գաղտնիք Ղարաբաղի»-ն հանդիսանում է XVIII-XIX դարերի Արցախի հարազատ պատմությունը,

Ա. Բեկնազարյանի «Գաղտնիք Ղարաբաղի»-ի համար օգտագործված բազմաթիվ աղբյուրները առաջին ձեռքից (հոր՝ Պարսից արքունիքում մեծ պաշտոնների հասած Աբրահամ Բեկնազարյանի օգնությամբ ի մի բերված՝ հետազայում ուսյալ որդու միջոցով այն Հայրենիքի մասին ամբողջական պատմություն հյուսելու մտադրությամբ)՝ հեղինակի ջանադրությամբ, զգուշությամբ ու գաղտնապահությամբ հավաքված անտուակելի վավերագրեր էին, գաղտնիքների բույլ:

Դա էր հիմնական պատճառը՝ հեղինակի կողմից գիրքը կոչելու «Գաղտնիք Ղարաբաղի»,

XIX դարավերջին գրականության մեջ գերիշխող պատմական մեթոդի առկայությունն էր պատճառը, որ «Գաղտնիք Ղարաբաղի»-ի շուրջ բանավեճ բացաժ գրականության ներկայացուցիչներից ոմանք փորձում էին գիրքը վիպական գործ անվանել՝ արժեզրկելով վերջինիս գիտական կողմը,

«Գաղտնիք Ղարաբաղի»-ն ամուր ողնաշար, հզոր բովանդակություն, ազգային բարձր գաղափարակարգ ունեցող ունեցող երկ է, ազգային առաքինություններ մատնանշող, կենսաբանական տրվածքի՝ արցախցու ազատության հզորագոր ոգին պահող-պահպանող վարքամատյան, ազգության ողնաշարին ծանրագույն հարվածներ իջած ողբերգությունների պատկերման ամենամատյան, սովի, գաղթի զարհուրելի պատկերներ արձանագրող երկ,

Գրքի շարադրանքում ոճական ներհյուսմամբ առկա են կենսագրական հղումներ, հայրենական հուշեր ու գրականագիտական, մշակութաբանական անդրադարձներ,

Կերպավորված են մելիքական տները, նրանց ծագումնաբանությունը, գործունեության լայն շրջանակները, միաբան և անմիաբան մելիքները, հոգևոր առաջնորդները, Ղարաբաղի ոճագործ խան կոչվածները՝ իրենց համախոհներով, կործանարար ծրագրերով, հարևան երկրները, երկրների բարձրաստիճան անձինք՝ իրենց քաղաքական շահագրգռություններով, ազգային-ազատագրական նկրտումները, պայքարը, հավատի կորուստները, անավարտ ծրագրերը:

8. «Գաղտնիք»-ը պարունակում է Ղարաբաղի հասարակական, քաղաքական, գրական, դրամատիկ անցքերի պատմությունը, մելիքների վիպապատմական կերպավորումները, բնավորության տիպական գծերը, արցախահայության ինքնատիպ հոգեկերտվածքը, հասարակական կյանքն իր բազմաբնույթ առանցքներով, արցախահայության կենցաղավարությունն ու հոգևոր ստեղծումները, պարսից շահերի արշավանքները դեպի Ղարաբաղ՝ սկսած 1795 թ. պատմական ծանր իրադարձություններից մինչև մելիքությունների կործանումը, 1826-28 թթ. ռուս պարսկական պատերազմները և դրանց հաջորդող պատմաքաղաքական իրադարձությունները, մելիքների վարքը, տարբեր պատումներով վիպասքների վերածված անօրինակ խիզախությունը, թուլություններն ու անբեկանելի հայրենասիրությունը:

Տարաբնույթ հիմնարար հարցադրումներով, գեղարվեստական ու պատմական, ազգագրական հարուստ տարրերով պատմիչը նկարագրում է ինքնիշխանության պահպանման համար մելիքների որդեգրած հերոսական պայքարի բազմապիսի դրսևորումները՝ լի զարմանահրաշ վիպական

օրինակներով, փոքր արձակի հիանալի նմուշներով, գեղագրում արցախահայության բարոյական, իրավական, տոհմային, հողային հարցերը, քաղաքական ներքին և արտաքին հարաբերությունները՝ հարևան պետությունների ու ժողովուրդների հետ, որոնց առանցքներում՝ ուշադիր ընթերցման դեպքում, առկա են գրականագիտական նուրբ ու նոր հարցադրումների օրինակներ:

«Գաղտնիք»-ն ամբողջության մեջ ունի գեղարվեստորեն և պատմականորեն արժեքավոր, գիտականորեն ապացուցելի դրսևորումներ, պատմագրական ազդակներ, որի վերագնահատմանն է նվիրված սույն աշխատությունը:

9. ա) Դարավերջին սկզբնավորված կենսագրական մեթոդն իր արտահայտությունը գտավ Գրիգոր Տէր Հովհաննիսյանի (Մուրացան) «Բաղտասար Մետրապոլիտ Հասան Զալալեանցի համառոտ կենսագրություն» երկում:

Հանձինս այս երկի Մուրացանը վիպականացրել է XIX դարի Արցախի քաղաքական ճակատագիրը, քննել նրան հասած ողբերգությունների շարանը, բացել Ղարաբաղի խաների կատարած ոճրագործությունների ժանգոտ պարույրը, մեկնել Արցախի հոգևոր և աշխարհիկ առաջնորդների կյանքի քրոնիկան, տվել մելիքական տների հերոսականության և առաքինությունների նկարագիրը, և ամենակարևորը՝ առանձնահատուկ կերպով և մեծ սիրով վարքագրել Աղվանից կաթողիկոսական տան վերջին արժանավոր ժառանգորդի՝ Բաղդասար Մետրապոլիտ Հասան Զալալանցի համառոտ կենսապատումը, հատկանշել նրա հերոսական պայքարը՝ վարած դատերի միջոցով հետ խլելով Արցախի վանքապատկան և մելիքապատկան հողերը՝ հափշտակված Ղարաբաղի Մեհտի Ղուլի խանի և նրա ժառանգներից կողմից, մեկնել Շուշիում, հատկապես Բաղդասար մետրապոլիտի կողմից հզոր թափով ծավալված հրատարակչական, մշակութային, գրական կյանքի քրոնիկան :

բ) XIII դարում Արցախի քաղաքական ճակատագիրը խաթարվել էր դեպի Հայոց երկիր կատարված մոնղոլ-թաթարական արշավանքների պատճառով: Այդ ահասարսուռ դեպքերի գրական արտահայտությունն եղավ Մուրացանի «Ռուզան կամ հայրենասեր օրհորդ» դրամայի ծնունդը: Մուրացանի կողմից վարպետ գրչով վիպականացված ենք տեսնում ամբողջ Արցախ աշխարհը, հատկապես Խաչենի մելիքական տունն իր ավանդութակիր, արարչագործ էությանմբ, հերոսական շերտերով, Արցախի մելիքներն իրենց առաքինություններով, ամուր բարքերով, իշխանական տան ինքնատիպ դիմանկարով, մոնղոլների դեմ մղված ազատասիրական պայքարով, Ռուզան հերոսուհու նախնիներից ժառանգած, հանուն հայրենիքի փրկության անձնագրի վարքով, պատմական և վիպական

դրվագների նկարագրությամբ, հերոսների հայրենասիրական կերպավորումներով՝ լցված վտանգաված հայրենիքին ազատություն բերելու աներեր ուխտով:

գ) Մուրացանը «Խորհրդավոր միանձնուհի» երկում Արցախի գեղարվեստական համապատկերն է ներկայացնում:

Գրական, կրթական, հրատարակչական, հոգևոր, մշակութային կյանքի գեղարվեստական նկարագիրը, որով Մուրացանը փորձում է ընդգծել 1860-ականների լուսավորության գաղափարակիրների առաքելությունը՝ առաջադրելով իր գյուղափրկիչ ծրագիրը, գրողը նույնպես ներկայացրել է **«Խորհրդավոր միանձնուհի» երկում:**

Մուրացանը տիպական արվեստակերտված ոճավորումներով է ստեղծում անձնուրացների մի պատկերասրահ, որի հերոսները որդեգրել են 1960-ականների առաքելությունը՝ խավարի մեջ խարխափող գյուղն ու գյուղացիությունը լուսավորելու, ժողովրդի բարոյական մարմինը հրամայականով:

Անձնուրացների և անձնասերների պայքարում կա՛մ բարգավաճում, կա՛մ կորուսվում են բարոյականության ծիլերը, կա՛մ դառնում ցորյանի մի հատիկ՝ բարեբեր արտում, դառնալով ցորյանի ալեծուփ բերկրանք, կյանքի կոչելով առաքելության-անձնուրացության հարատևության գաղտնիքը:

Մուրացանը արձանագրում է լուսավորության և խավարամտության բախումը, կերպավորում Շ. (Շուշի) քաղաքի ստեղծագործ նկարագիրը, հարցադրում՝ ո՞ր կորան 60-ականների սերնդի նկրտումները, հրաշագործ տքնանքը:

10. Մ. Թադիադյանը «Ճանապարհորդութիւն ի Հայս» երկում Հայաստանի տարբեր վայրերի նկարագրությանը զուգահեռ վիպականացնում է նաև Արցախի գեղարվեստական և պատմական դիմագիծը, հատկանշում ժամանակի նշանավոր մարդկանց վարքը, քննում մելիքների գործունեությունն ու ժամանակաշրջանի բարդ ու հակասական էությունը, առանձնանշում թշնամի տարրի վտանգավոր ներկայությունը հայոց կյանքում, այդ ամենը համախմբելով Հայաստան աշխարհի ամբողջական նկարագրում:

Հեղինակի՝ Մեսրոպ Թադիադյանի քննության առանցքում Արցախ աշխարհն է յուր տոհմիկ հոգեբանությամբ, արցախցիների, հատկապես շուշեցիների հասարակական, մշակութային, տնտեսական, լուսավորչական և կրթական, հոգևոր կյանքի շերտերում կարևոր ու նշանակալի դեր խաղացած մելիքական տների ու առանձին մելիքների ծավալած ազգօգուտ, հայրենանվեր գործունեության մեկնաբանությամբ, նրանց տարաբնույթ առաքինությունների բացահայտմամբ, վիպական և պատմական հերոսների

կերպավորմամբ, Արցախի բարդ ու հակասական քաղաքական կյանքի նկարագրությամբ:

11. Ս. արքեպիսկոպոս Զալայանցը «Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան» երկի էջերում իր ավերակվող երկի հիշատակները նորոգ տեսնելու մտահոգությամբ, եկող սերունդներին ինքնաճանաչության, հայրենաճանաչության, նոր ազգային գաղափարաբանության է մղում՝ հայրենի սահմանների մթազնած գաղափարը առաջադրելով ու այն խստագույնս քննելու հրամայական ներկայացնելով:

XIX դարի Հայոց Արցախի թեման բացառիկ ճարտարվեստով վավերացված, վիպականացված ենք տեսնում Սարգիս արքեպիսկոպոս Զալայանցի «Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան» հսկայածավալ ու փաստաշաղախ երկում:

Երկասիրության բազմաթիվ էջերում փայլատակում են Հայոց անանց հանճարի արդեն մայրամուտին փարվող արևափայլ ցուլանքները, մտքի և ոգու հսկայական կանգուններով արարված հոգևոր անխոս վկաները՝ մայրացու տաճարները, որոնք ժամանակի անողոք հայացքի տակ լույս են աղերսում՝ լուռության մեջ մարած երբեմնի իրենց տերերի հայացքներին կենդանություն բերելու աղերսով, որոնց հնամենի փառքի ու վեհության վերջին աղերսարկու վկայախոսը կարծես դարձավ պատմիչ Սարգիս արքեպիսկոպոս Զալայանցը՝ Հայոց չորս ծագերում սփռված հանճարափայլ սրբավայրեր այցելելով և հոգեխոռով ու արտասովալից վերջին համբույրը տալով:

Սարգիս արքեպիսկոպոս Զալայանցի «Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան» երկն ու նրա ներկայացրած նոր ազգային գաղափարակարգը հեղինակի զինավառ մտքի ու հայրենավառ ոգու ահեղականչն է՝ **հայ ժողովրդի պատմության փառահեղ ու վսեմաշուք անցյալի, վտանգված ներկայի ու հուսավառ ապագայի վերակերտման հզոր տեսլականը՝ Ազգային Պետական ամբողջական կառույցի վերականգմամբ, վերահաստատմամբ:**

Այդուհետ **դա էր** նրա հայրենավառ հոգու **սրբազան Ավետարանը:**

12. Շրջագայելով Վարանդայի, Դիզակի, Խաչենի, Ջրաբերդի պատմաաշխարհագրական վայրերով՝ Հայկունին քննախույզ հայացքով ուսումնասիրում է արցախցիների հասարակական, բարոյահոգեբանական, ավանդութակիր դիմագիծը, առատ տեղեկություններ հավաքում նրա պատմական, վիմագրական, բանավոր արարումների շռայլից, վիճակագրական, տեղագրական, գրակրթական կյանքին ու տնտեսական կացությանը վերաբերող շրջանակներից, ընդգծում Արցախի մելիքների պատմաքաղաքական, վիպական դիմագիծը: Նրա գրչի տակ՝

«**Ուղեգնացական ակնարկներ**»-ում, խիտ երանգներով վիպականացվում է բարդ ժամանակաշրջանն ու հակասություններով լի նրա դիմագիծը, առանձնանշվում ժամանակի մարդիկ, Արցախի հոգևոր և աշխարհիկ առաջնորդների փոխհարաբերությունների, բարձր ատյանների, իշխանապետերի հետ ունեցած գաղտնի նամակագրությունների պատկերը, երանգավորվում արցախցիների կյանքի բազմաբնույթ նկարագիրը, վարքագրվում խիզախող և արարող ոգու, մտախառնվածքի լայն շերտերի ընթացքը, դինամիկան, հիշատակության տրվում արցախցիների ծանր ու հերոսական քաղաքական ճակատագրի դրամատիկական էջերը:

«**Ուղեգնացական ակնարկներ**»-ում ընդգծված ենք տեսնում ոչ միայն հայրենավառ գործչի գործունեության և նպատակաուղղվածության լայն ու հետաքրքիր շրջանակները, այլև հրատարակված տարաբնույթ և առատ հոդվածների և ուսումնասիրությունների մասին արժեքավոր տեղեկությունները:

Հարուստ գրական, վիպական, պատմական, ուղեգրական, հոգևոր, տեղագրական, հրապարակախոսական, գիտական ժառանգություն է թողել Գեղամյանցը, առանց հիմնավոր գիտական գնահատության արժանանալու: Գեղամյանցն իր գրաքննական վաստակով գրական շրջանակներին հայտնի դարձավ «Հայկունի» կեղծանվամբ:

13. Ղ. Ալիշանը, որդեգրած ազգային գաղափարակարգին հետամուտ՝ առաջադրած խնդիրների հրատապությամբ, նյութի համադրական, աղբյուրագիտական վերլուծությամբ, հայթայթած նյութը համեմատական, նշանագիտական, վերլուծական մեթոդներով քննելու, գնահատելու, ստեղծագործական, գիտական պահանջներով ներկայացնելու նպատակաուղղվածությամբ է գրել՝ փոքր չափի մեջ ամփոփված, բայց մեծ ծրագրայնություն ու գաղափարներ հետապնդող «Արցախ» երկը:

Ի տարբերություն Մ. Թադիադյանի, Ս. Զալալյանցի, Ա. Կոստանդյանցի, Մ. Բարխուդարյանի, որոնք Արցախի մասին իրենց պատմությունները հյուսել են իրենց իսկ ձեռնարկած ճանապարհորդությունների ընթացքում՝ հավաքած և ի մի բերած հարուստ ու փաստացի նյութերի հիման վրա, Ալիշանն Արցախի, ընդհանուրստան մեջ՝ Հայաստանի մասին իր բազմաբովանդակ նկարագրությունները, գրական, պատմաաշխարհագրական ընդհանրացումները կատարել է, հիմնվելով բացառապես ձեռք բերած հսկայական գիտելիքների խորը իմացություններից, գիտական բազմապիսի ուսումնասիրություններից, պատմիչներից քաղած փաստարկների հիման վրա, շատ աննշան դեպքերում որոշ անհամաձայնությունների տեղիք տալով:

14. «Մակար Բարխուդարյանի արցախապատումը» մասը ներկայացնում է Մակար Բարխուդարյանի «Արցախ» մեծարժեք գիրքը, որն իր հերթին նոր գեղարվեստական, պատմաաշխարհագրական, տեղագրական, ազգագրական և այլ կարգի երանգներ է բերում Արցախի գեղարվեստական նկարագրի վերհանմանը:

Մակար Բարխուդարյանի արցախապատումը արժեքավոր անդրադարձ է Արցախի պատմությանը՝ նրա հնամենի բնաշխարհի, աշխարհիկ և հոգևոր արժեքների, պատմական, գրական բացառիկ նմուշների, բուսական ու կենդանական աշխարհի, տնտեսական, սոցիալական, աշխարհագրական բազմապիսի շերտերի վերհանման տեսանկյունից, ինչը վառ կերպով ի ցույց է դրված «Արցախ» մեծարժեք գրքում: Այս զուգահեռի վրա ընդգծված է Մակար Բարխուդարյանի՝ իր կողմից համեստ դիտված, բայց ծանրակշիռ վաստակը գրականագիտության, արցախագիտության մեջ:

15. Լեոյի «Մելիքի աղջիկը» երկի տիպաբանական գեղարվեստակոնցեպտուալ (կոնցեպտ (լատ.)- հղանալ, հղացք, մտահղացում) համակարգը, հիմնված է ազգային գաղափարաբանության, ազգային փիլիսոփայության, կռվի փիլիսոփայության, եկեղեցու կռվի փիլիսոփայության միաձուլով, հայ ժողովրդի ճակատագրի, պատմական դերի տեսության ընկալմամբ և դրա կատարողական կարգի լավագույն բացահայտմամբ:

Լեոյի՝ հայ ժողովրդի ազգային ճակատագրի վերաբերյալ որդեգրած պարադիգմաների՝ տեսակետների համակարգը, խստագույնս բնորոշում է նրա վերաբերմունքը ազատության, անկախության կատեգորիայի, ժողովրդի պատմական դերի վերաբերյալ, այն է՝ միաբան ոգով սեփական ազատությունը սեփական ուժերով կռել, կռվի փիլիսոփայությամբ և գրականության ու պատմության թողած դասերով առաջնորդվել՝ ապահովելով ազգի ազատասիրության և հարատևության գաղտնիքը:

16. Կ. Մելիք-Շահնազարյանը՝ Տմբլաչի Խաչանը, իր ֆելիետոններում և այլ երկերում ստեղծել է Շուշիի բազմաբնույթ համապատկերը, վիպական-երգիծական շերտերով անդրադարձել Շուշիի ու շուշեցիների կյանքի բազմակողմանի քննությանը, կարևորել **Շուշիի հասարակագիտական- ժողովրդագիտական- գեղագիտական, բարոյագիտական նշանակությունը, արժևորել հասարակական, բարոյագիտական-էսթետիկական հնչեղությունն ստացած նշանավոր «Թոփխանա»-յի** խաղացած դերը, ձեռք բերած գեղագիտական նշանակությունն արցախահայության կյանքում:

Տմբալսին հաջանի մականունն է, նախևառաջ նրա զբաղմունքը՝ բանահյուսական էությունն ու խառնվածքը, երգիծելու անզուգական շնորհքը, արարելու ջիղը: Նրա հանդեպ անհուն սիրով են լցված շուշեցիներն անխտիր, արվեստի, գրչի մարդիկ, արցախցիները, կովկասյան հայաշատ վայրերը, ու... անհամբեր են նրանք ընթերցելու-վայելելու հեղինակի համով-հոտով գրվածքները: Հասարակության տարբեր խավերի ներկայացուցիչները, գրական գործիչներից՝ Լեոն, Մ. Բարխուդարյանը, Մուրացանը, Ա. Բակունցը նրան «ազնիվ բարեկամ» են անվանում, հորդորում-խնդրում՝ անխնա գրել ֆելիետոններ:

Տմբալսի հաջանի երկերի պատկերավորման հիմնական միջոցները ժողովրդական նվագարաններն են՝ **զուռնան ու տմբլան**, որպես միասնական հնարանք, ռազմակոչ ու հաղթանակ ազդարարող, լուրերի տարածողներ, որոնք ազդարարում են արցախցիների հոգևոր և մտավոր աշխարհի ամուր ու թարմ, մարտական, ճշմարտախոս կենսազգացողությունը:

17. Կ. Մելիք-Շահնագարյանի երգիծական էջերում վիպականացված են 1880-90-ական թթ. Արցախի հասարակական-քաղաքական կյանքը, սոցիալական հարաբերությունները, մշակութային, ազգագրական, պատմագրական կյանքի տարաբնույթ կողմերը, սուր քաղքենիական երանգները: Այս դիտանկյունից Կ. Մելիք-Շահնագարյանին կարելի է համարել ժամանակաշրջանի ամենանշանավոր երգիծաբանը արևելահայ գրականության մեջ: Անժխտելի է այն փաստը, որ նա իրավամբ ամբողջապես յուրացրել է իր մեծ նախորդների ու ժամանակակիցների՝ Աբովյանի, Նալբանդյանի, Պատկանյանի, Պռոշյանի, Աղայանի, Սունդուկյանի, Պարոնյանի, Օտյանի, Կամսարականի բերած գրական արժեքները և արևելահայ ու արևմտահայ գրականության հարուստ ավանդները և հարստացրել դրանք տիպական ինքնատիպ օրինակներով:

18. XIX դարի հայ գրականության մեջ արտահայտվեց նաև Արցախի գրական-մշակութային, կրթական պատկերը: Նկատելի առաջընթաց է տեղի ունենում Արցախի մտավոր-մշակութային զարգացման ասպարեզում: Շուշին դառնում է Կովկասի քաղաքակրթության կենտրոններից մեկը: Ընդլայնվում է կրթական հաստատությունների ցանցը՝ ռեալական, հոգևոր, օրիորդաց դպրոցներ, մամուլ, հրատարակչություններ, մշակութային օջախներ, արհեստակցական միություններ:

Արցախի հայտնությունը, թեման XIX դարի հայ գրականության մեջ իմացական հիմնավոր նախադրյալներ ստեղծեց հետագա ուսումնասիրությունների համար՝ նշանավորելով մի նոր ուղղություն ազգային մշակույթի, գրականության և պատմագիտության ասպարեզում:

XIX դարավերջին հայ գրականության մեջ նկատելի է մի տարօրինակ միտում, որը վճռորոշ (դրական և բացասական իմաստով) դեր է խաղացել հրատարակված երկերի գնահատման գործում: Դա պատմական ժանրի, **պատմական մեթոդի ու նրա գործոնի** գերակա դերն է հատկանշում, որի բացատրությունը հետևյալն էր. ցանկացած հրատարակված գիրք, եթե պատմական արժեք չի ներկայացնում, կամ պատմական ժանրի երկ չի, անարժեք է որակվում: Այս երևույթը նկատելի է նաև ատենախոսության մեջ ներկայացված համարյա բոլոր հեղինակների ու նրանց երկերի գնահատության օրինակներում:

Տ Պ Ա Գ Ր Վ Ա Ծ Գ Ի Տ Ա Կ Ա Ն Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք Ն Ե Ր

ա) Մ Ե Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր

1. Արցախը XIX դարի գրականության մեջ և մշակություն (պատմաքննական ուսումնասիրություն), Պլատոն Զուբովի «Ղարաբաղի աստղագետը» պատմավեպը, մենագրություն, մաս առաջին: Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 2004, 352 էջ:

2. Մուրացանի գեղարվեստի պարադիգմաների փիլիսոփայական մեկնությունները (պատմաբանասիրական քննական տեսություն), մենագրություն: Ստեփանակերտ, «Վաչագան Բարեպաշտ» հրատարակչություն, 2014, 80 էջ:

3. Արցախը XIX դարի հայ գրականության մեջ (գրականագիտական ուսումնասիրություն), մենագրություն: Ստեփանակերտ, «Դիզակ պյուս» հրատարակչություն, 2021, 832 էջ:

բ) Գ Ի Տ Ա Կ Ա Ն Հ Ո Դ Վ Ա Ծ Ն Ե Ր

1. «Գաղտնիք Ղարաբաղի»... Պատմական ուսումնասիրություն՝ն, թե..., Մեսրոպ Մաշտոց համալսարանի «Լրատու» (գիտական հոդվածների ժողովածու), թիվ 2, Ստեփանակերտ, «Դիզակ պյուս» հրատարակչություն, 2007, էջ 127-142:

2. Բաֆֆու «Գաղտնիք Ղարաբաղի» մատենախոսությունը, Մեսրոպ Մաշտոց համալսարանի «Լրատու» (գիտական հոդվածների ժողովածու), թիվ 1(8), Ստեփանակերտ, «Դիզակ պյուս» հրատարակչություն, 2010, էջ 106-118:

3. Ապրես Բեկնազարյանի «Գաղտնիք Ղարաբաղի» պատմությունը և նրա գաղափարական ուղղվածությունը, Մեսրոպ Մաշտոց համալսարանի «Լրատու» (գիտական հոդվածների ժողովածու), թիվ 2(9), Ստեփանակերտ, «Դիզակ պյուս» հրատարակչություն, 2010, էջ 146-163:

4. «Գաղտնիք Ղարաբաղի» պատմական արժեքավոր ուսումնասիրության հեղինակների՝ Աբրահամ և Ապրես Բեկնազարյանների գործունեությունը Պարսկաստանում, Վանաձորի Հովի. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ/ Միջազգային I գիտաժողովի նյութեր, Վանաձոր, «ՍԻՍ» տպագրատուն, 2011, էջ 90-96:

5. Մակար Բարխուդարյանը և Ապրես Բեկնազարյանի «Գաղտնիք Ղարաբաղի»-ի ճակատագիրը, «Բագին», Լիբանան, Բեյրութ, Հրատարակություն՝ Համազգայինի Կեդրոնական Վարչութեան, 2011, ԽԹ. տարի, թիւ 4, էջ 57-61:

6. Լեոյի «Վէ՛պ թէ պատմութիւն» քննախոսությունը, «Կանթեղ», թիվ 1(50), Երևան, «Ասողիկ» հրատարակչություն, 2012, էջ 22-27:

7. Մուրացանի «Ռուզան» դրամայի քննամիտումները և նրա վերարժևորման հարցը, Արցախի պետական համալսարանի գիտական տեղեկագիր, Ստեփանակերտ, ԱրՊՀ հրատարակչություն, 2013, էջ 193-208:

8. Մուրացանի «Խորհրդավոր միանձնուհու» խորհուրդը, Մեսրոպ Մաշտոց համալսարանի «Լրատու» (գիտական հոդվածների պարբերական ժողովածու), Երևան, «Լիմուշ» հրատարակչություն, 2015, էջ 254-261:

9. Մակար Բարխուդարյանի արցախապատումը, «Կանթեղ» (գիտական հոդվածներ), թիվ 4 (65), Երևան, «Ասողիկ» հրատարակչություն, 2015, էջ 17-27:

10. “Тайна Карабах” Апреса Бекназаряна и русско-персидская война 1826-1828 гг. (A. Beknazaryan’s “Mystery of Karabakh” and Russian-Persian War of 1826-1828), Proceedings of the XVII International Academic Congress “History, Problems and Prospects of Development of Modern Civilization”(Japan, Tokyo, 25-27 January 2016). Volume II, “Tokyo University Press”, 2016, p.672-677.

11. Тема Арцах-Карабах и его появление в армянской литературе 19 века. “Тайна Карабах” Апреса Бекназаряна (The theme of Artsakh-Karabagh and its appearance in 19 th century Armenian literature. “The ystery of Karabakh” Apres Beknazaryan), Proceedings of the 6th International Academic Congress “Science, Education and Culture in Eurasia and Africa”. (France, Paris, 23–25 March 2016). Volume VI. “Paris University Press”, 2016, p. 332-337.

12. Нашумевшая книга армянской литературы XIX века -“Тайна Карабах” Апреса Бекназаряна (Famous book of XIXs century’s Armenian literature - Apres Beknazaryan’s «The mystery of Karabakh»), London Review of Education and Science, 2016, № 1(19), (January-June). Volume III. “Imperial College Press”, 2016, p. 472-478.

13. Неподатливый идеолог и воин национально-освободительного движения арцахского армянства конца 18-го века – Овсеп Эмин (Unyielding ideologue and warrior of the national-liberation movement of the Armenians of Artsakh in the end of 18th century - Hovsep Emin), Oxford Review of Education and Science, 2016, No.1. (11) (January-June). Volume V. “Oxford University Press”, 2016, p. 678-683.

14. Легенда армянской литературы конца XIX века, достойная переоценки, ценная история “Тайна Карабаха” Апреца Бекназаряна (The legend of the Armenian literature in the late 19th century is worth to re-evaluate, valuable history “the mystery of Karabakh” of Apres Beknazaryan), American Journal of Science and Technologies, 2016, No.1. (21) (January-June). Volume III. “Princeton University Press”, 2016, p. 531-536.

15. Идентификация политической судьбы Арцах-Карабаха в историческом исследовании Апреца Бекназаряна “Тайна Карабаха” (Identification of the political destiny of Artsakh-Karabakh in Apres Beknazaryan’s historical research “The Secret of Karabakh”), Yale Journal of Science and Education, 2016, No.1. (18), (January-June). Volume X. “Yale University Press”, 2016, p. 151-156.

16. Մակար Բարխուդարյանի «Քննադատութիւն քննադատութեանցը» և XIX դարավերջի հայ գրականության քննադաշտը, Մեսրոպ Մաշտոց համալսարանի «Լրատու» (գիտական հոդվածների պարբերական ժողովածու), Երևան, «Լիմուշ» հրատարակչություն, 2017, էջ 261-269:

17. Րաֆֆու «Խամսայի մելիքությունները» երկի կերպարների համակարգը, «Կանթեղ» (գիտական հոդվածներ), թիվ 4(73), Երևան, «Ասողիկ» հրատարակչություն, 2017, էջ 3-15:

18. Հայրենաճանաչման փիլիսոփայությունը և արցախյան լինելության խորհուրդը. Սարգիս Զալալյանց, «Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան», Մեսրոպ Մաշտոց համալսարան/ Միջազգային գիտաժողով, Ստեփանակերտ, «Դիզակ պյուս» հրատարակչություն, 2018, էջ 202-222:

19. Մեսրոպ Թաղիադյան. Արցախյան անդրադարձներ, («Ճանապարհորդութիւն ի Հայս»), Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան/ Միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, «Միսմա» ՍՊԸ, 2018, էջ 75-90:

20. Ղևոնդ Ալիշանի «Արցախ» երկը, «Գիտական Արցախ», թիվ 1, Երևան, «ԱԵԳՄՄ» հրատարակչություն, 2018, էջ 30-35:

21. Արցախցիների կյանքի գեղարվեստական պատկերը Տմբալչի Խաչանի ֆելիետոններում. «Զուռնա-Տմբալչ» ժողովածուները, Մեսրոպ Մաշտոց համալսարանի «Լրատու» (գիտական հոդվածների պարբերական

ժողովածու), Երևան, «Լիմուշ» հրատարակչություն, թիվ 1 (21), 2019, էջ 158-164:

22. Հայ և համաշխարհային գրականության եզակի կերպավորումը. Մելիք-Շահնազարյան մելիք Հուսեինի դուստր Գայանե, Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան/ Միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, «Միսմա» ՍՊԸ, 2020, էջ 166-180:

23. Ղևոնդ Ալիշանը և Արցախը, Ղևոնդ Ալիշանը հանրագիտակ (հոդվածների ժողովածու՝ նվիրված Ղևոնդ Ալիշանի ծննդյան 200-ամյա հոբելյանին), Խաչատուր Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարան, Երևան, Լուսակն, 2020, 148 էջ, էջ 107-120:

24. Ղևոնդ Ալիշանը և Մեծ Հայքի տասներորդ նահանգ «Արցախ»-ը, Արցախի պետական համալսարանի գիտական տեղեկագիր, Պրակ 1, Ստեփանակերտ, «Էդիտ Պրինտ» տպարան, 1, 2020, էջ 76-90:

25. Դիզակի Մելիք Ավանի կերպարը Լեոյի «Մելիքի աղջիկը» պատմավեպում, Գրիգոր Նարեկացի համալսարան, «Դպրատուն», Ստեփանակերտ, «Դիզակ պյուս» հրատարակչություն, 1(11) - 2021, 135 էջ, էջ 20-30:

26. BALAYAN, Z. (2021). Literary, Methodological Paradigms: The Theme of Artsakh in the Works by Raffi and Muratsan. WISDOM, 18(2), 176-187.

БАЛАЯН ЗИНАИДА ВАНИЕВНА ТЕМА АРЦАХА В АРМЯНСКОЙ ЛИТЕРАТУРЕ XIX ВЕКА

Автореферат диссертации на соискание ученой степени доктора филологических наук по специальности 10. 01. 01 - “Армянская классическая литература”.

Защита диссертации состоится 24 декабря 2021г., в 12:30 часов, на заседании специализированного совета высшей аттестационной комиссии 003

Литературоведение, действующего в НАН РА институте литературы им. М. Абеяна.

Адрес: 0015 Ереван, ул. Григора Лусаворича 15.

РЕЗЮМЕ

Несмотря на то, что Арцах, как историко-географический и литературный субъект в армянской культуре и литературе, существовал со средневековья, по-новому изобретается и представляется в XIX веке.

Предмет исследования научной работы - история армянской литературы XIX века, в частности литературы об Арцахе.

Параллельно с существующим опытом литературоведения и арцаховедения представленная диссертация в своем роде является научным шагом.

Так как в истории армянской литературы тема Арцаха, как отдельная тема не рассматривалась, то есть по данному принципу не проводились исследования, то исследуемый литературоведческий материал в данной диссертации, несомненно, имеет актуальное звучание своей практической значимостью.

Аспекты, охватываемые представленной темой, достаточно широки и почти бесконечны, поэтому мы предпочли осветить те ключевые памятники, которые с большей глубиной представляют литературу Арцаха.

В культуре Арцаха XIX века по своей жанровости, программной ориентированности, остроте, освещению разнообразных вопросов, занимает особое место литература, которая включает в себя создание произведений, отражающих тематические различия, слои, идеологии национального освободительного движения, просвещения села и крестьянства, образования, представлением Шуши как культурного просветительского центра.

Литературные традиции прошлого продолжались, обретая новое дыхание и значение, открывая новые литературные имена с новой национальной идеей содержания, тематики и развития: Г. Алишана, М. Тагиадяна, С. Аркеписка Джалалянца, Раффи, Мурацана, А. Бекназарян, Лео, Айкуни, М. Бархударяна, К. Мелик-Шашназаряна.

В данном научном исследовании на фоне армянской литературы XIX века мы попытались представить литературу Арцаха **как отдельное литературно-филологическое рассматриваемое явление.**

Оно имеет свои самобытные традиционные черты, литературно-исторические, литературоведческие, духовные и мирские культуры и искусства.

В сферах литературы, истории и культуры были созданы также такие ценности, которые по каким-то причинам были отвергнуты, и сейчас дают повод для более глубокого изучения, переоценки и переосмысления.

Этот шаг, бесспорно, должен быть сделан, чтобы окинуть новый взгляд на принципы литературоведения, его подходы, существующие стандарты, которые препятствовали и препятствуют правильной и независимой научной оценке культурных ценностей.

Исследование, исходя из содержания, было разделено на шесть глав.

В шести главах исследования представлены драматические события истории Арцаха, в частности, политическая судьба и запросы, роль

Меликств Хамсы, свободолюбивые намерения арцахского армянства, национальное освободительное движение, их борьба, политические ориентиры, частные и общие выгоды.

Работа охватывает историческую эпоху, которая включает в себя этическую, художественную, общественную, политическую и правовую жизнь национальной идеологической системы Меликств Хамсы XVIII - XIX веков, двойные игры соседних стран, которые хотят завладеть политической ситуацией региона, внешние и внутренние взаимоотношения, острую картину самоуправления, а также освободительное движение арцахства, находящего под русским правлением, против персидского ига, политические ориентации, потери и надежды, культурно-просветительское движение Шуши, как “оазиса искусств” в Закавказье, представляя картину культуры, литературно богатой жизни Арцаха.

Мы довели до завершения научное исследование, используя сопоставительные, критические источники, структурные методы, подчеркивая типические особенности и стилистические вопросы исследуемого материала. Комментарии выполнены согласно параллельно литературоведческим мыслям того периода.

Во время анализа представленных произведений первичными являлись принципы типичности создания образа профессиональной оценки конкретного анализа, вида и содержания, истории, литературы, искусства и философии.

Научная работа состоит из введения, шести глав, из которых первая и вторая (вторая в свою очередь делится на две подглавы), состоят из двух частей, третья и четвертая, пятая из трех частей, шестая глава из одной части, заключения, приложения и списка использованной литературы.

Во введении представлены те научные основы, которые нашли свое отражение и анализ в шести главах исследования.

Так как представленные в диссертации летописи Платона Зубова, Г. Алишана, М. Тагиадяна, С. Аркеписка Джалалянца, Мурацана, Раффи, А. Бекназаряна, Айкуни, М. Бархударяна, Лео, К. Мелик-Шахназаряна включают в себя XVIII- XIX века, то учитывая разность авторских индивидуальных стилей, на страницах нашего анализа мы раскрываем описание страны Арцах, литературно-национальные, политические, исторические, географические начертания Меликства Хамсы, описание духовной и материальной жизни монархии, литературной, правовой, земной, культурной и военной, в присущих красках, которые представляет также свои уроки с точки зрения современной политической жизни арцахского армянства в настоящем и будущем в решении политических вопросов.

Параллельно показана тема Арцаха, его появление в армянской литературе XIX века, его художественная картина, которая своей практической значимостью получает **актуальное звучание, вносит новые пласты, освещает поучительные стороны литературы и истории Арцаха, наличие крепкой опоры исследования и документальности научной основы.**

Наша цель и задача показать все это в литературном, политическом, историческом поле, подчеркивая **актуальность, особую роль и значимость** представленных для **переоценки произведений, поучительные уроки политической жизни арцахского армянства.**

Поскольку представленный к исследованию исторического романа Платона Зубова “Карабахский астролог” Раффи перевел с русского на армянский язык после того, как закончил “Меликства Хамсы” и назвал их “взаимодополняющими друг друга”, во введении к “Переводчику”, мы посчитали обоснованным изложение исследования данных двух произведений в двух подглавах одной главы в качестве двух различных книг, представляющих одну и ту же тему одного и того же автора: **одну - как перевод, вторую - собственного написания.**

Первая подглава первой главы исследования **“Первый роман (переводческий) об Арцахе (Платон Зубов “Карабахский астролог”)** представляет анализ романа русского писателя П. Зубова, который путем использования интересных композиционных обращений представляет историю меликов Арцаха, их художественный образ.

Будучи первыми в армянском литературоведении и русистике мы попытались проанализировать и представить переоценку Платона Зубова как писателя, исследователя, как реального художественного и исторического образа Арцаха, предоставляя обширные исторические и литературные ссылки. Мы издали его под общим названием “Арцах в истории армянской литературы XIX века”.

В структуре диссертации особый раздел посвящен роману Платона Зубова “Карабахский астролог” не только по причине того, что это первый арцахский роман, где впервые показана художественность ее идеологии, но и потому, что в нем точно представлены быт и нравы Арцаха, и вполне богатый художественный образ, политические события того времени.

Представлена и четко описана **актуальность, практическая значимость и научная новизна** книги Платона Зубова.

